

Hayastani Kagandc'ek'ë  
: Meç Egernin Zoherë  
Irenc' Patkernerov.  
K'ert'owaçner ew  
Yodowaçner Mer  
lawagoyn Grognere [...]

Kapamadjian, Simon (1863-1942). Hayastani Kagandc'ek'ë : Meç Egernin Zoherë Irenç' Patkernerov. K'ert'owaçner ew Yodowaçner Mer lawagoyn Grognere Zowarcali Not'er.  
1919.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՍԱԶԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՂԱԿԱԴՐԵՔԸ

ՄԵՇ ԵՂԵՑԻՆԻ ԶՈՀԵՐԻ  
ԻՐԵՎԱՆ ՊԱՏԱՆԵՐՆԵՐՈՒՄ.

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՅՈԴՈՒԱԾՆԵՐ  
ՄԵՐ ԼԱԽԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐԻ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ՆՈԹԵՐ

ԵՒԼՆ. ԵՒԼՆ.



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՑՈՒԽ Ա. ԳԱԲԱՍԱԶԵԱՆ

Զաքարյանքիլար, Աղբիւրին մօտ, թիւ 50

1919

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

65007





ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՑԵԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՂԱԿԱԴՐԵՔԸ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ԶՈՀԵՐԸ  
ԽՐԵՆՑ ՊԱՏԵՐԵՎԵՐՈՎ,

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՅՈԴՈՒԱԾՆԵՐ  
ՄԵՐ ԼԱՒԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐԵ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ՆՈԹԵՐ

ԵՒԼՆ. ԵՒԼՆ.



Կ. ՊՈՂԻՄ  
ԴՐԱՏՈՒՅ Ս. ԴԱՎԱՄԱՀԵԱՆ  
ԶԱՐԱՐԱՐԱՐՈՒՅ, Աղբիւրին մօտ, թիւ 50  
1919




**ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ**

**Օ. ԱՐՁՈՒՄԱՆ**

**№ 251**



## ՀԱՅ ՆԱՇԱՏԱԿՆԵՐՈՒՆ



Պարզ գործաւորի աղտոտ տարազը ուսերուս վրայ՝ կուգամ գործակցիլ հայ պանթէռնի շինութեան: Եթէ չկարենամ դնել սա տկար ծեռքերովս անկիւնաբարերն այդ նուիրական տաճարին, կրելով քար Մասիսու կողերէն եւ կամ ափ մը աւազ Եփրատի սահանքներէն, գէթ փոքր խաչքար մը դնեմ անոր կամարներուն տակ ու անոր մուտքին առջեւ բարձրացող Արմաւիրի սօսիներուն ու լացող ուռիներուն փարիմ անհուն խանդով:

Փա՛ռք եւ օրինութիւն Ձեզ, ո՞ պաշտելի նահատակներ,  
Դուք մեր երեւակայութեան առջեւ կուգաք իբր զարհուրելի տռամի մը մէջ, որուն արիւնոտ վարագոյրը վեր առնելու պիտի սոսկայ ամենէն անգութ ծեռքն անգամ:

Այս, մեր հոգիներէն սոխակներ փախած են ու հոն միայն բուեր կ'եղերերգեն:

Ամենէն տիտան հանճարներն անգամ անկարող մեր աղէտքին մեծութիւնը պատկերացնելու պիտի փշրեն իրենց գրիչները ու քարերու զարնելով պիտի խորտակեն իրենց քնարները :

Այդ աղէտքին ականատես զգայուն միսիոնարներ իրենց սրտի ցաւէն խենդեցած են :

Ո՞վ պաշտելի նահատակներ, Ձեր սրտաճմլիկ աղա-

ղակները , արցունքն ու հառաջանք , բողոքն ու անէծք հրեշտակներ ոսկի սափորներու մէջ ամփոփելով տարին Յաւիտենականին առցեւ ու Ան պատգամ գոռաց ու հը-րամայեց զայրոյթով թէ սէտք է վերածնի Հայ սերունդը :

Ահա մեծ սիփոփանքը՝ զոր կ'աւետեն մեզ իբր Յաւի-տենականին Առաքեալներ՝ Անգղիա , Ամերիկա , Ֆրանսա , Իտալիա եւ այն ազնիւ ազգեր , որոնք համախմբուած են իրաւունքի դրօշակին տակ :

Ուրեմն , ո՛վ պաշտելի նահատակներ , դիտեցէք վերէն , ամպերու շղարշին տակէն հոգիի աչքերով շղթաներու շա-ռաչաձայն խորտակումը Հայ բազուկներուն վրայէն ու խնդագին դիտեցէք Հայ աշխարհը Ազատութեան արշալոյ-սին ոսկի մազերով ծածկուած :

**ՍԻՄՈՆ ԳՈՐԾՎԱՃԱԽԱՆ**



## ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱՑՈՒՄ



ԽՄԲԱՏ ԵՊԻՍԿ. ՍԱԱՏՔԵԱՆ  
Առաջնորդ Կարնոյ, ծնած Ա-  
տաբաղար, 1871 ին.



ԱՐՏԱԿԱԶԴ Վ. ԳԱԼԻՆՏՔԵԱՆ  
Առաջնորդ Եղեսիոյ, ծնած  
1876 ին, Պրուսայի Ելնիճէ գիւղը։  
Գործերը «Միութենական հարցն  
և Շնորհալի», և Սարտուններ։



ՎԱՐԴԴԵՍ  
(Յովհաննիս Ուրեմնիկիւլեան)  
Օսմ. Երեսփոխան, ծնած Կա-  
բին 1871 ին.



ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԿ  
Օսմ. Երեսփոխան, Փաստաբան,  
գրագէտ, ծնած 1862 ին Կ. Պոլիս-  
իր գործերը, Անհետացած սերունդ  
մը, Խղճմանի ձայններ, Կեանը  
ինցպէս որ է, Լուռ ցաւներ։



ՎԱՀԱՐԵ Վ. ԱԱՀԱԿԵԱՆ  
Առաջնորդ Եւղոկիոյ, Արմաշու  
Դպրեվանքէն. ծնած է Շապին  
Գարահիսար 1886ին.



ԳԵՂԱՄ Վ. ԹԵՎԵՔԵԼԻԱՆ  
Առաջնորդ Քղիի, ծնած Շապին  
Գարահիսար Էնտէրէս գիւղաքա-  
ղաքը. Հեղինակած է Նոր կշիռ,  
Նոր արժեկներ գրքոյկը.



ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ  
Բանաստեղծ, ծնած 1888 ին,  
Սեբաստիոյ Բոգնիկ գիւղը. Իր  
գործերը Սարսուններ, Զարդը, Ցե-  
ղին սիրը, Հերանու երգեր:



ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ  
Գրագէտ և հրապարակագիր,  
ծնած 1874ին Խարբերդ, իր գըտ-  
խաւոր գործն է Յայզալոյ:



ՍԱՀԱԿ Վ. ՕՇԱՊԱՆԵԱՆ

Առաջնորդ՝ Պրուսայի, ծնած է  
1875ին Սեբաստիա:



ՏՕՔԹ. ԿԱՐԱՊԵՏ ԽԱՆ ՓԱՇԱՆԵԱՆ

Գրագետ, ծնած է 1864ին Կէտիկ Փաշա, Հեղինակած է բազմաթիւ գործեր, առողջաբանական և վիպական:



ԱՐՑԱՄԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Գրագետ, բանաստեղծ, ծնած  
է Մալկարա, 1873ին, իր գործերն  
են, Երկունիք, Լիուած Քնար, Նոր  
Քնար:



ՑՈՎՃԱՆՆԵԱՆ ԴԱԶԱՆԺԵԱՆ

Բանասէր, ծնած է Եւղոկիա,  
1870ին. Յօրինած է «Եւղոկիոյ  
հայ գաւառաբարբառ», «Ոգե-  
հարցութիւն» և Մագնիսականու-  
թիւն», գրած է Քերականութեան  
դասընթացք մը և ընթերցարան-  
ներ:



ՊՍԱԿ Օ. Վ. Տ. ԽՈՐԵՆԵԱՆ  
Առաջնորդ Խարբերդի, ծնած  
է 1882ին,



ՏՕՔԹ. Ռ. ՄԵԼԱԿ  
(Ռուբեն Զիլինկիրեան)

Դրագետ, ծննդ է Սելիվրի,  
1885 Փետր. 15ին, գրած է բազ-  
մաթիւ յօդուածներ առողջաբա-  
նական, առ անձին հրատարակած  
է Կարմիր Դիրքը :



ՏԻՐԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

Հրապարակագիր, ծնած է Կե-  
սարիա. Խմբագրապետ Սապահի,  
հեղինակ Գրանսենթուրք ստուար  
բառարանի մը .



ԴԱԳԻԿ ՕՉՈՆԵԱՆ

Հրապարակագիր և ուսուցիչ,  
ծնած է 1882ին Եապին Դարահի-  
սարի մէջ. յօրինած է երկարա-  
շունչ աշխատասիրութիւններ, իբ-  
դմաւոր գործն է Պատմութիւն  
Հայ լեզուի և Բանահիւսութեան .




ՄԿՐՏԻՉ Վ. ԶԼՂԱՏԵԱՆ  
Առաջնորդ Տիարպէքերի.



ՏՕՔԹ. ՆԱԶԱՐԵԼԹ ՏԱՂԱՒԱՐԵԱՆ  
Բժիշկ և գրագէտ, Օսմ. Երես-  
փոխան, բանասէր, ծնած Սեբաս-  
տիա 1863 ին. Հրատարակած է  
բազմաթիւ գործեր առողջարա-  
նական և բանասիրական.



ԱԿՆՈՒՆԻ  
(Խայտառ Մալումեան)  
Յեղափոխական գործիչ, Ռու-  
սահայ:



ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ

Ռւսուցիչ, գրագէտ, ծնած է  
1855ին Բալու. Աշխատակցած է  
Պոլսական թերթերու Հրանդ ծած-  
կանունով.

Բացի այս նշանակուածներէն Մեծ Եղեռնին զոհերն են .  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԷՆ՝ Խոսրով Եպիսկ. Պէտրիկեան (Կե-  
սարիա), Եղնիկ Եպիսկ. Գալֆաքճեան (Բալու), Ներսէս  
Եպիսկ. Դանիէլեան (Եօղկատ), Խորէն Եպիսկ. Դիմաքսեան  
(Կիւրին), Սուրէն Վ. Գալէմեան (Բաղէչ), Համադասպ  
Վ. Եղիսէեան (Ճանիկ), Գէորգ Վ. Թուրեան (Տրապիզոն),  
Անանիա Վ. Հազարապետեան (Բարերդ), Մելքիսեդեկ Վ.  
Հովիւեան (Քէմախ), Ներսէս Վ. Մկրտիչեան՝ Առաջն. փո-  
խանորդ Եւդոկիոյ, Օհան Վ.՝ Կիւմիւշիանէի վանքին վա-  
նահայր, Յովհ. Վ. Մուրատեան՝ Մշոյ Ս. Առաքելոց վանքի  
վանահայր, Կարապետ Վ. Յակոբեան (Կունոսոս), Երեմիա  
Վ. Լիֆորեան (Պէյրութ), Սահակ Վ. Մարգիսեան (Պէյրութ),  
Յովսէփ Վ. Մողոմոնեան (Խարպէկ), Սրդար Վ. Եօթնեղբայր-  
եան (Խնուս), Վարդան Վ. Յակոբեան՝ Մշոյ Ս. Կարապետ  
վանքի վանահայր, Կորիւն Վ. Մրապեան (Բասին), Վաղի-  
նակ Վ. Թորիկեան (Շապին Դարահիսոր), Բարսեղ Վ. Ման-  
կըռեան (Սիս), Սահակ Վ. Զոլաքեան (Սիս), Ներսէս Վ. Տ.  
Բարթողեան (Արմաշ), Յովհ. Վ. Մավիտն (Արմաշ), Հ.  
Մատթ. Վ. Գարակէողեան, Կարապետ Քնյ. Մխալեան  
(Պարտիզակ), Յուսիկ Քնյ. Քաջունի (Արարկիր) :

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԷՆ՝ Յորոթիւն Շահրիկեան (փաս-  
տարան), Սարգիս Մինասեան (Խմբագիր, ուսուցիչ), Մու-  
րատ (Համբարձում Պօյաճեան՝ օսմ. երեսփոխան), Յար-  
Ճանկիւլեան (գործիչ), Ներսէս Փափազեան (Մաշթոց վրդ՝  
Խմբագիր), Աշխարոնի Տիգրան (Մերուժան Վ.) Ժագ Ատ-  
յապալեան (հրապարակագիր), Արիստակէս Գասպարեան (փաս-  
տարան), Տոքթ. Պեննէ Թորոտեան (որ իր 19 ընկերներով  
կախաղան հանուած է), Արամանթօ (բանաստեղծ), Վռամ-  
եան (Օ. Դերձակեան՝ Օսմ. երեսփոխան), Եր. Արմաքէշիան-  
լեան (հրապարակագիր), Սարգիս Մոին (առեւտրական),  
Ներսէս Զաքարեան (ուսուցիչ), Միհրդատ Հայկազն (առեւ-  
տրական), Տիգրան Զէօկիւրեան (ուսուցիչ), Բ. Շահպազ  
(հրապարակագիր), Արրահամ Հայրիկեան (ուսուցիչ), Յովհ.  
Գլըճեան (գրավաճառ), Մ. Վարժապետեան (ուսուցիչ) :

Մեր Բողոքական և Հռովմէական եղբայրներն ալ շատ մեծ կորուստներ ունեցած են, որոնց ցուցակագրութեան համար այս սուղ էջերն անբաւական են դժբախտաբար։ Երեւելի քարոզիչներ, ուսուցիչներ և ուսուցչապետներ այս անլուր աղէտքին զոհ գացած են, իրենց պատուական հասարակութեան հետ, Վենետիկոյ Մխիթարեան Հայրերէն զոհ ինկան Տրապիզոնի մէջ տեսուչ Հ. Մկրտիչ Սարգեան, Հ. Կ. Տէր Սահակեան, ծանօթ իրենց կարեւոր երկասիրութիւններով, Հ. Թովմաս, Մէրտինի մէջ, Հ. Պողոս, Տրապիզոնի մէջ։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԿՂԵՐԵՆ՝ Կարապետ Եպ. Քչուրեան, Ստեփան Եպ. Իսրայէլեան (Խարբերդի Առաջնորդ), Յակոբ Եպ. Թօփուղեան (Մուշի Առաջնորդ), Լեւոն Արքեպ. Քէչէճեան, Միքայէլ Եպ. Խաչատուրեան (Մալաթիոյ Առաջնորդ), Անդրէաս Եպ. Զէլէպեան (Տիարպէքիրի Առաջնորդ), Իգնատիոս Արքեպ. Մալուեան (Մարտինի Առաջնորդ), Մկրտիչ Վ. Գալոյեողեան, Սահակ Վ., Սահակ Վ. Թէրզիպաշեան, Արսէն Վ., Վարդան Վ., Յովհաննէս Վ., Նաում Վ. Շոտեան, Գարբիէլ Վ., Անդրէաս Վ., Յովսէփ Վ., Մատթէոս Վ., Իգնատիոս Վ., Յակոբ Քհ., Գրիգոր Վ. Փիլիպպոսեան, Սարգիս Վ. Խաչատուրեան, Ղեւոնդ Վ. Մինասեան, Յովհաննէս Վ. Եերսէսեան, Յակոբ Վ. Փարթամեան, Սարգիս Քհ. Եավիեան, Յարութիւն Վ. Փերուղեան, Ստեփան Վ. Զաքարեան, Յակոբ Քհ. Քէշիշեան, Յակոբ Վ. Մելիքեան, Աթանաս Վ. Ղաղարոսեան, Յարութիւն Վ. Եւնազեան, Ստեփան Վ. Լովիմեան, Յովսէփ Վ. Գարագաչեան, Պողոս Վ. Գարագաչեան, Պետրոս Քհ. Ալազեան, Ամբրոսիոս Վ. Քրիստինեան, Աւետիս Վ. Փիլիպպոսեան, Յարութիւն Վ. Թուրչեան. Մատթէոս Վ. Հաճեան, Դրանիկոս Վ. Հանեան, Վարդան Քհ. Կոստանեան։

Անիրաւորին մը զործած ըլլալու զաղափարը կը ննէ զիս երբ կը մտածեմ թէ զաւառական խոր անկիւններու մէջ վարագուրուած բազմաթիւ սաղանդներ՝ որոնք զոհ եղան ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ, անկարելի եղած է ինձ ներկայացնել հոս։ Այս մասին միջոցներուս անբաւականութիւնը խոստվանելով կ'աղաչեմ իմ ազնիւ բնիւցողներուն, որ յետին միտերու չի վերագրուի այս ակամայ թերութիւն։ Խորին մեծարանք բոլոր ինկածներուն հետ նաեւ այն պայծառ իմացականութիւններուն՝ զորոնք խաւարեցուցին վայրագ չարագործներ։

1919

## Ուջո՞ւն, Նոր Տարի

\* \*

Բարիք յուսալով մենէ, Նոր Տարի,  
Խանդով կ'ողջունենի գալուստը բարի:  
Անձրեւներն առատ, սառ ձիւնն ալ ձմրան  
Թափիկ հայրենի արտերուն վրան  
Որ հողին ծոցին ծալքերուն մեջէն  
Յուրեններ ծըլին, հասկեր բողբոջեն,  
Եւ մրշակին երդն ու հովուխն կըտուր՝  
Վայելեն հացին ժըն՛րին երկնատու:

Ողջո՞յն, Նոր Տարի.

Գալուստը բարի,  
Թո՛ղ բերք տայ բեղուն  
Հայոց բոյսերուն:

\* \*

Թո՛ղ հովերդ անուս փրչեն զարունի. . .  
Աչք մը չ'արտասուէ, սիրս մը չ'արխնի:  
Մայիսին վարդեր բո՛ղ բացուին, բուրեն.  
Շուրբներ յագենան սիրոյ աղբիւրեն  
Եւ մատաղ մայրեր բի՛ւր գորովանիով  
Օրօններ երգեն օրրաններու ժով,  
Եւ իրենց տախուկ արզանդէն բերրի  
Մերունդ մ'հարազատ բո՛ղ պտղաբերի:

Շնորհէ՛, Նոր Տարի,

Այրեր ժաջարի  
Սիրով պատարուն  
Հայոց կոյսերուն:

\* \*

Մեր հոգին կիրքով քո՞ղ չը բորբոքի,  
Ոխակալութեան աններող ոգի,  
Ատելի կամքեր, սեւ դաւեր ու նենգ՝  
Մեր միտքն, կուրծքն իսպառ դուրս վաճենք:  
Նո՞ր Տարի, մեր մութ ամպերուն վերեւ  
Դու հրահոսան փայլեցո՞ւր արեւ  
Որ՝ Պատւոյ, Պարտի՝ լայն, մօտադաշտ  
Ճամբուն վրայ յառաջ երթանք անմոլար:

Ողջո՞յն, Նոր Տարի,  
Գալուստ՝ է բարի.  
Յոլքեր տուր վառվուն  
Հայոց լոյսերուն:



Հայն, աչքերն ուղղած միտս երկինքն ի վեր,  
Կրցած է կրել տաս զրկանք ու ցաւեր  
Եւ, զերմ հաւատքով. կամքով աննըկուն,  
Ազգութեանց կարգին մեջ՝ մընալ կանգուն:  
Նոր բարի Տարի. ժայտ՝ դուն անօր,  
Կեանք մը նպարգեւէ՛ երջանկաւնորհ  
Ու հայրենատենչ իղձերն իր ամեն  
Հասնին ովասիսն որուն կը դիմեն:

Ողջո՞յն, Նոր Տարի,  
Թո՞ղ գալուստ՝ արի  
Մարմին տայ բրբուն  
Հայոց յոյսերուն:

**ԱՊՐԻՍԱՆԴՐ ՓԱՆԱՍԵԱՆ**



ԹՎՅԱՆ ԱՌԱՋՎԵՑ  
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԻՄՈՒՄՈՒ ԿԵԱՆՔԵՆ

ՀՈՎՈՒԻԿԸ

Բերդեհեմի մըսուրին յով՝  
Յիսուս Մանուկն երք ծնած էր նոր՝  
Հոն հովիւներ եկան անոր,  
Պաշտելու զի՞նքը ցերմ սիրով:

Առին իրենց հետ ընծաներ  
Որ Յիսուսին զան նրայրեն,  
Առաւ պտուղ, մեղր ու կաթ,  
Փափուկ ճերմակ աշ զզար:

Ծերուկ հովիւ մը բերաւ զառ  
Իրեւ նուեր կամ պատարագ,  
Պօտիկ հովիւ մըն աշ պատկառ  
Հեռուներեն եկաւ արագ,  
Ու պաղ յարին վլրայ քափեց  
Տափ արցունիքի տարափ մը մեծ:  
Վասրնգի այդ խեղճը չուներ  
Ուրիշ բան մը տալու նրայր:

Անսկր սղբաւ որք մըն էր ան՝  
Բարի մարդոց ձեռփին կարօս,  
Ուսի սրին սկրը լիայն  
Բնծայ բերաւ Յիսուսին մօս.  
Այդ առաջին անգամն էր որ  
Հարուս եղաւ եւ ունենոր:

Յանկարծ աչքերը վիայլեցան.  
Առաւ իր սրինզը եղեգնիկ,

Ու մեղեղի մը խողոշածացն  
Մըսուրին յով երգեց մեղմիկ:

Յիսու Մանուկն, Յովսիկ, Մարիամ  
Դոհ եղան այդ ձայնեն սիրուն,  
Որ նրազովն անուշահամ  
Թրթռացուց խորքն անոնց հոգույն:

Իրիկունները միշտ կուգար  
Մանուկին յունն օրօրելու,  
Որ ժրափիտով զրւարքաւար  
Որին կ'ըլլար շնորհակալ:

\* \* \*

Թէ յունիս բան մը Յիսուսին տաղու  
Աղքատ հովուին պէս, ի պատիւ անոր  
Կրթնաս դուն երգել երգ կամ այելու,  
Եւ վերել առնել օրհնութիւններ նոր:



### ԿԱՑՈՐԻԿՆԵՐԸ

Յովսիկ՝ Մարիամ արագ կ'երթան  
Որ անտառին դուրս եղելով  
Շուտ հասնին տեղ մը ապահով . . .  
Բայց իջառ մուրը զիշերուան:

Երբ ա՛յ յերեն տեսներ ճամբան,  
Աղօրք մ'ըրին սրտանընէր.  
Ահարեկած եղն աղ անրան  
Բայց մ'իսկ առնել կը վարանէր:

Սկսաւ Յովսիկի խոկալ տրտում,  
Ու սրին վիշտն էր անպատում.

Ի՞նչսիս զսնել ելք մը յաջող . . .  
Յանկարծ տեսաւ, քուփիև մեջև հր  
Որ պսպրդաց աստի մը շող,  
Յետոյ անոր նըմանները — կայծոռիկներ —  
Շուրջ բեւածելով կ'ընեն եղեւից,  
Ու ծուաղելով լոյսեր մուրիև մեց՝  
      Յոյց տրւիև ելին անտառիև  
Որ մոլորած չը քափառիև:  
Այսպէս դժուարիև այդ ճամբուն վրայ  
Օգևեցիև անոնք Մանուկ Յիսուսիև.  
Տե՛ս անասնիկ մ'իսկ մանր ու սիև  
Կրնայ Տիրոցդ ըլլալ ծառայ:



Պէս է որ դուն աղ Յիսուս Մանուկիև  
Ամեն ճամբուն վրայ՝ սի՛րտը նրւիրեւ.  
Նախանձն ունեցիր այդ անասնիկիև  
Որ Տիրոցդ առցեւ ըլլաս լուսերեւ:



### ԲՈՐՈՏ ԱԴԱԽԻՆԸ

Չար Հերովդիկ ուզեց որ  
Յիսուս Մանուկն ըսպաննեկ,  
Բայց Հրեշտակ մ'երկնաւոր  
Սուրբ Յովակիփիև կը ճայնեկ.  
«Ա՛ն Մանուկդ ու մայրեն, ու մի՛ մընար հոս,  
      Փախի՛ր Եղիպտոս»:

Ճամբայ եղելով անցան ձոր ու սար,  
Առուն իրիկուն խլեցիև երկար,

Ուրիշ ճար չիկա՛ր  
Մանուկը վտանգել փրկելու համար:

Չիրեկի ծարա՛ւր տանջեց շա՛ս . . .  
Չորս դիև Յովսէփի կը նայեր զո՞ւր,  
Անցած ժեղին մեջ անապատ  
Կրնա՛ր զսնել աղբիւր կամ չուր:

Ճամքուն վրայ հանդիպեցաւ զեղուկ մի կի՞ն  
Որ ձեռքն ուներ շեցուն կուծ  
Կարով մը քարմ ու անուշ,  
Ու տուաւ անկէ Մանուկին:

Կընց ժեսլը սակայն սոսկում պատճառեց.  
Բորբոսա՛ծ էր ձեռքն ու երեսն ալ նոյնապէս.  
Բայց երբ Յիսուս իր քարիկը կարկառեց  
Ու փայտիայեց անոր ձեռքերն ու երես՝  
Որ շնորհակալ ըլլայ քարի այդ կընց,  
Արդին մարմինը մաքրուած էր ամբողջ:

Երբ մօս հասաւ առուի մը ցած՝  
Կինն իր դկմքը ուզեց դիտել անգամ մ'ալ . . .  
Ա'խ, ո՛րքան էր զեղեցկացած.  
Բայց չեր կըրեւար իր աշխերուն հաւատալ:  
Հի զարմանին զննեց իր դկմքը նորեն,  
Ու չեր զիտեր՝ ինչ պատահած էր իրեն,  
Բայց վերցապէս չուներ այլեւըս կասկած.  
Թէ Մանուկին ձեռքն այդ հիրաշին էր զործած:

\* \* \*

Թէ ցաւ ունիս, սիրուն որդեակ,  
Օ՛ն, Յիսուսին մօսկիր,  
Որ ընդունիս դուն ալ համակ  
Առողջութեան ձօն ու ձիր:

ԽՊՐԵՏԻ ԱՐՔԵՊԻՌՈՒ. ԳՈՒՐԵԱՆ

## Ա Զ Գ Ե Ր Ո Ւ Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Կ Ն Ը



Չորս տարի է որ Կռոնոսի սայրասուր մանգաղը առատօքն հնծեց հայ բեղուն դաշտին հունձերը. չորս տարի է որ մահասփիւռ Ահրիմանին – Զարութեան դեւին – արիւնազանգ սուրը՝ յանձին ճիւաղակերպ բորենիներուն՝ հայ արիւնով ոռոգեց լերկ սարերն ու անջրդի ամայութիւնները. չորս ամանոր է որ բոցաշունչ մրրիկներ խանձեցին ամէն ծիլ եւ կանաչութիւն հայ կեանքի, խաւարակուռ ամպերով ծածկեցին երկինքը, առանց թողլու որ կենասարեր արեւը իր զերմիկ ճանանչներով զուարթացնէ տրտմաթախիծ սիրտերը:

Եւ երբ 1919ի սեմինվրայ կանգնած՝ պահ մը փորձենք արիւթիւն ունենալ ակնապիշ զննելու հայ իրականութիւնը, պիտի տեսնենք միայն աւերակոյտներ, քանդուած օհախներ, կիսակործան տաճարներ եւ խոպան ու անմարդի դաշտեր, որոնց վրայ դիւակուինչ ազուաւներու երամները կը խայտան եւ չարաշուք բուերու վայերգութիւնը կը լսուի: Կարծես թէ մահուան տարերային շունչը ամենի ալիքներով փչած անցած է հայկական ընագաւառներէն մարդկալին ոսկրակոյտներ ցանելով ամէնուրեք:

Սակայն այդ ոսկրոտին ցամքած եւ անկենդան կմախք մը չէ երբեք, այլ մոխիրներու տակ թաղուած կեանքի վառ կայծեր. եւ հողին արգանդին մէջ ամիսփուած ներոյժ ու կուռ սերմեր, Եզեկիէլի վսեմ Տեսիլին համածայն (Գլ. 1.7.) կ'սպասեն Աստուածային շունչի մը, որ հրաթեւ սաւառնելով այդ մեռելական անհուն դաշտին վրայ, զիղ, մարմին, մորթ պիտի տայ այդ զօսացած ոսկորներուն եւ անոնք պիտի վերականգնին հզօր ու կենդանի:

Հայրենասէր մարգարէն՝ զերեվար, ընացնցուած Խորայէլացիները կ'ոգեւորէր յարութեան հեռապատկերով մը. Ակսպէս, կըսէ, Տես այդ ցամքած ոսկորներուն, Ահա՛ կենդանի շունչ մը պիտի վիճում ծեր վրայ, ծեզի պիտի տամ

ջիղեր, դնդերներ, մորթ, իմ ոգին պիտի փչեմ ձեզի, պիտի վերակենդանանաք:» «Եւ մարգարէացայ, եւ եմուտ ի նոսա շունչն եւ եղեն կենդանի, եւ կանգնեցան կացին ի վերայ ուղից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ:» Ինչ խորհըրդանշանական պատկերացում նահատակ եւ ազատութեան ծարաւի ազգերու:


Հայկական զանգուածային անողորմ ջարդերը հայրենիքին սուրբ սեղանին վրայ կատարուած երկնային զոհագործութիւն մըն է, որուն արեան կայլակներէն փայլակնացայտ պիտի շողայ Ազատութեան հրաշափառ Արեւը: Բազմաչարչար հայութիւնը իր դիւցազն եւ պանծալի մարտիրոսներուն անիւններէն պիտի վերկենցաղի ոսկեփետուր փիւնիկի մը պէս, եւ կեանքու ներդաշնակութիւններով պիտի լեցնէ իր մայրենի նուիրական բնագաւառներունցով ու մռայլամած ամայութիւնները:

Ա՛լ պէտք չէ որ վիատինք յուսահատ այրիի մը պէս յաւերժացնելով մեր սուզն ու տրտմութիւնը. այլ գօտեալնդուինք ապրելու նոր ու նշմարիտ կեանք մը, մնալով այն բարձրութեան վրայ ուր կենդանի եւ ազատ ազգերը միայն կրնան ելնել:

Եւ արցունքու ու զահանդած աչքերս մեր արիւնոս անցեալէն դարձնելով դէպի մերձաւոր ապագան, հոգիի աչքերով կը նշմարեմ արհաւրալից ամպերէն վեր ծագող ազատութեան զմայլելի արեւը որ վսեմ նահանչումներով կը շողափայլի Մասիսի զագաթին վրայ, եւ իր կենսաբաշխ շողերուն խուրձերով կը գեղազարդէ բնաշխարհին գեղեցիկ լեռները, ծաղկալից հովիտները եւ արգաւանդ դաշտերը: Ստեղծագործող նոր կեանքի մը սարսուոր կ'ոգեւորէ հայ հոգիները: Ամայի դաշտերը ոսկեփայլ հունձքերով կը ծփան, եւ երակներուն վրայ գեղակերտ քաղաքներ կը բարձրանան, եւ ազատութեան դրօշը խրոխտ ու յաղթապանծ՝ իր բազմերանգ ծալքերով կը հովանաւորէ վերածնած Հայաստանը:

Զեն մեռնիր այն ազգերը որ կռուիլ գիտեն Ազատութեան համար:

## ԱՍԵՆԱՅԻ ՄՐԳՈՅ



Զանգակները դողանջեցին մեռելոցի կանչն ոգեւար:  
Ծանրաթախիծ օրն անձրեւու կը տարածուի քաղին վրայ,  
Խւահանչիւր ո՛ք կը լրէ իր ըզբաղումըն առօրեայ,  
Մեռելներու գեղահանդէս, նրւիրական փառքին համար:

Շիրմաստանին մէջ վաղբնջուց, ուր դամբաններ կան զարդարուն,  
Զըւարբութիւն մը տրտմական կ'ընդելուզուի ծիլ ծաղկանց հետ,  
Եւ սառուցեալ պախուցն ուժգին, ուռիներուն մէջէն նամէտ,  
Խօլ սաղարբներ ու սարսուռներ կը ցանցընէ տիրիմներուն . . . :

Զանգակները դողանջեցին մեր խեղներուն կանչն ոգեւար:  
Ո'վ զրդջումներ, յիշատակներ, ո'վ մենութիւն, ո'վ տրւայտանք,  
Սիրուածներու բարբառն է որ, մեր ականջին կը հասնի ցանգ,  
Մինչ, ողջերու հոգին կ'երթայ մեռելներուն դին թեւապար:

Հողին վրայ, սրգատարազ բազում կիներ կը ծընանդրեն,  
Մահը լալով իրենց զաւկին կամ եղբօրք կամ ամուսնոյն,  
Ու կը դառնան յամրնիրացիկ, հոգիներնին ցաւով լեցուն,  
Տառապահիւծ՝ սլատերազմին իրենց առքած վրւտի բեռէն:

Մեռելոցի՝ դուք զանգակներ, դողանջեցէ՞ք անոնց համար,  
Որ կը հանգչին խաղաղութեամբ լրութեան մէջ յաւիտենին.  
Եւ կիպարիսն՝ որ վայրահակ՝ կը հառաչէ պատին մէկ դին,  
Անոնց պատմէ՝ բոլ արցունքներն, զորս կը հեղունք առատաբար:


Թարգմ. ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՆՈՒ

ԽԱՆՈԹ. — Թրանսացի գերիի մը սրտառուչ մէկ ողբն է վերոզրեալը, գրուած՝ 917ի Ամենայն Սրբոց տօնին առիթով:



## Կ Տ Ա Կ Ը

### Վ Ա Ղ Ո Ւ Ա Ն Մ Ա Յ Ր Ե Ր Ո Ւ Ի Ն



Ոճիրի աշխարհին մէջ, սև պերողը գլխիս, արիւնոտ գըրգիքն ուսիս, երիթացած ու թէև վտիտ ճամբորդուհին եմ խըրոխտ . . . :

Կարօտով կ'սպասէիք ինծի, մայրեր, անպարագրելի անդունդներու, ահազնատեսիլ ճամբաներու ճամբորդուհին եմ, ու ձեր գուռը կը զարնեմ . . . :

Դէմքիս վրայ կատաղութեան հնոցներ կը վառին, սրտիս մէջէն յաւաներ կը ժայթքին, ու վրէժս անուն չունի, կայծակներէն կը ծնի . . . :

Իմ չարչարանքս տկարութիւն չէ ճանչցեր, գազաններու օձապտոյտ անդունդներէն՝ հովի պէս սուրացեր ու ձեր մէջն եմ հիմայ, մայրե՛ր . . . :

Ինչ վտառութիւն է ասիկա, ձեր աչքերուն մէջ, կայծի տեղ արցունք կը տեսնեմ, արիւնի տեղ, արցունքի ծովեր, ձեզի կտակներ եմ բերեր . . . :

Ես գայլերու և բորենիներու խնջոյքէն կը դառնամ, ձեռքերս լեցուն են ընծաներով, ձեզի արիւնոտ սրտեր եմ բերեր . . . :

Վագրերու ահաւոր կլավիներէն ու արծիւին պողպատէ կը-տուցէն խլեցի զանոնք, ահա լեցուն եմ նուէրներով . . . :

Մայրե՛ր, համբուրեցէ՛ք վարդերը որ զոհաբերուած քոյ-րերուս և եղբայրներուս արեան կայլակներէն եմ հիւսեր . . . :

Սրբեցէ՛ք սա փուճ արցունքները, խայտացէ՛ք, քանզի շողեր, լոյսեր ու արևներ եմ բերեր ձեզի . . . :

Բոլոր սանձուած զայրոյթները թո՛ղ արծակուին այսօր, և դողդղացող շրթունքները թո՛ղ մռնչեն, կտակներ ու հաւատքներ բերի ձեզի . . . :

Նշմարեցէ՛ք կարմիր արշալոյսները՝ որ ձեր հետքերուն տակ կ'արիւնին, անոնք իմ տանջուած ցեղիս արեան կաթիլներէն կը ծագին . . . :

Լսեցէ՛ք, ահազնալուր մռնչիւնը, ձեր ականջները վարժը-ուեցան արդէն անոր, խուլ հծծիւններն են, ահաւոր մռնչիւնի փոխուած :

Հազա՛ր բերաններ են անոնք և հազարներ. և անոնք թո՛ղ չդադրին մռնչելէ, մայրե՛ր, ականջ դրէք այս անսահման երգին, որ կտակն է մեր զոհերուն . . . :

Վրէ՛ժ, կը գոչեն անոնք, վրէ՛ժ, վրէ՛ժ կը գոռան ձեր ոտքերուն տակ արիւնոտ սրտերը, որ բորենիներու խնջոյքէն յափշտակեցի . . . :

1918

ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ



## ՊԱՏՄԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅ ՀԱՆՃԱՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Հայազգի զօրավարներուն մէջ՝ որ Բիւզանդական Կայսրութեան ծառայեցին, մեծագոյնը եղաւ Յովհաննէս Զմշկիկ, Կարճահասակ, շիկահեր, թաւայօն, խած ակն, յանդուգն ու դնդերապին սոսկալի ուժով օժտուած էր Յովհաննէս Զմշկիկ, որ իր մարմնական զօրութեան, զոր ժառանգած էր իր նախնիքներէն, կը միացնէր իր որդեգրած հայրենիքին Բիւզանդիոնի զարգացումը, իր զօրագունդերուն կ'ուզզէր այնպիսի ազգու ճառեր, որ զինքը սիրելի կ'ընէին բոլոր Յովներուն. Այն բազմաթիւ յաղթութիւնները, զոր տարաւ Պուլկարաց և Արաբացւոց վրայ, Կայսրութիւնը փրկեցին. Իր թագաւորութիւնը կարճատեւ եղաւ, բայց բաւական է ցոյց տալու թէ հայ հանճարը կրնայ հսկայական արդիւնքներու հասնիլ, եթէ ասպարէզ ունենայ. Արագ սլացքով մը մերթ հիւսիսի, մերթ հարաւի թշնամիին դէմ վազեց. Սուրը զոր իր թանձը ու ջղուածեռքը բռնեց՝ հելլէնականութիւնը փրկեց մահմէտական վտանգէն.

ՑԻԿՐԱՆ ԽՐԱՅԻՔ

(Ճառ Արենի մէջ խօսուած)

## ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ

---

Հեռու հեռու կը փախչին  
Խօլ վազքերով յիմարի .  
Այս է կամքը սեւ դահնին ,  
Հայկեան տունչը բող մարի :

Ի՞նչ տեսարան ահարկու ,  
Ոչ մեկն անոնց կարեկցի ,  
Ոչ մեկն անոնց այցելու .  
Մերկ են , կարօս չոր հացի :

Հալածական , խեղն աղբատ ,  
Կրելով սուր սուր զաւեր ,  
Կտրեն կ'անցնին անապատ ,  
Մրտով հոգւով կարեվէր :

Ախ , տաժանուս է նամբան .  
Պէսք է բայլել անմռունչ ,  
Իբրեւ գրաս կամ անբան ,  
Եւ կամ իյնալ հոն անշունչ :

Բարի՛ նրեւսակ , ո՞ւր ես դուն ,  
Տես սա՛ կեանքի ծաղիկներ ,  
Հեք մանուկներ , ժիր , արքուն .  
Խորշակահար են ինկեր ,

Երկինք , երկիր կը քննդան ,  
Կ'արձագանզէ ողբ ու կոծ ,  
Մինչ քըուառներ անկենդան  
Մարին ինչպէս կայծ ու բոց :

Երեւ քոչուն մը անբոյն  
Երկու մանկիկ գիրկն առած  
Մայր մը կայ հոս հեմ սժզոյն .  
Աշեր փակ են , ո'վ Ասուած :

Միքէ բնանա՞յ հանդարտ հեզ .  
Ա'խ , կ'երազէ արդեօք ի՛նչ ,  
Կ'երազէ իր տուն պարտէզ .  
Ո՞հ , մի՛ խոռվէք բաղցրիկ նինջ :

Նէ ուխտած եր սէր յաւէս  
Յօսօս եղած ամուսնոյն,  
Ապրիլ մեռնիլ անոր հետ  
Ու տէն պահել իրեն բոյն:


Կինն համակ սէր ու գորով՝  
Չոյզ մանկիկներ գիրկն առաւ ,  
Չգեցած ինք նոր կորով ,  
Արհամարհնեց ամեն ցաւ :

Բայց Զարն հեզնեց անոր նիզ ,  
Կինը մղեց խուլ պայքար ,  
Փրկելու իր զոյզ մանկիկ .  
Խեղնն հուսկ ինկաւ բոյլ տրկար:  
Ու Զարիմէն յաղթուած  
Փակեց աշերն առ յաւէս ,  
Հոգին երկինք բռաւ գնաց  
Երկու տառակ իրեն հետ :

\* \* \*

Ո՞հ , չէ մեռած նէ կարծես  
Հեմ դալկահար հրեօտակ ,  
Մահուան մէջ իսկ հպարտ վկա՝  
Գոռայ Վ.Ծ.Ծ. կուրծին տակ :

ՄԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵՑ



## ԵՒ Կ'ԱՂԱՂԱԿԵՆ ԱՆՌՆՔ...

~~~

Հեռուն, հեռուն այն վարդագոյն ձորին մէջ լուակեաց, ուր նոճիներու նամէտ խաւարները տեսիլներ կ'արդասաւորեն, ամեն արշալոյսին, նահատակներու ուկորները խնկարոյր, ամէնը մէկ, անչարժ, երկիւղած և իտէական երջանկութեամբ Արեւագալի իրենց յաւիտենական աղօթքը կը քնարերգեն այսպէս.

«Մենք, Արարատին ծնունդները անարատ և Սեբաստիոյ և' Կարնոյ և' Վանի և' Բաղէշի և' Տիգրանակերտի և' Խարբերդի և' Կիլիկիոյ հպարտ տոհմիկները հարազատ, և Արեւելքի ռահվիրայ, օրեր շաբաթներ և ամիսներ ամբողջ թափառեցանք, տարագրուեցանք անդադրում հորիզոնէ հորիզոն։ Եւ մեր կարմիր և մեր գերմարդկային Գողգոթային վրայ ի՞նչ Արիւններ, ի՞նչ Յոյսեր և Երազներ մարմարեայ մարեցան, անէացան և բեղմնաւորուեցան դառնօրէն, դիւցազնօրէն և անհունօրէն։

«Ու հոս, մեր հոգիներուն պէս խոր, մեր սրտերուն պէս մշտայոյզ և մեր ցաւերուն պէս յաւերժական այս ձորին մէջ մարտիրոսացումի և աստուածացումի սեղանին վրայ ողջակիզուեցանք։ Եւ մեր արիւնի գետակները յուռթի և մեր աճիւնները վարդագոյն բարձրացուցին, յաւերժացուցին մեր, մեր ցեղին, մեր դարաւոր և ազնուական ցեղին նահատակութեան Մեհեանը, ուր վազը ինչ աստուածներ, ինչ Արեւներ և Երազներ զիսաւոր պիտի գան պաշտամունքի, խնկարկումի և նուիրումի լուսեղէն։

«Ո՞չ այդ վահէվանեան Մեհեանին աստուածացումին ի սպաս բիւրաւոր ստեղնագործող ու մեր, արդասաւոր մայրութիւններ, կուսական երազող գեղեցկութիւններ, մանկական ձիւնեղէն ամբծութիւններ և բիւրաւոր ծնունդներ իւ-

բենց հսկայ քեղմնաւորումին մէջ իսկ զոհուեցան, զոհուեցան վայրագօրէն արիաբար բայց անկարեկիր :

«Թէև մեր խաչելութեան ճամբուն վրայ անծայրածիր ին'չ դարաւոր Հեթանոսութիւններ, ին'չ վայրենի Պղծութիւններ և ին'չ մռայլ Զարութիւններ իրենց երկաթեայ ժանգոտ փողերով մեր արիական մեր ցեղին բնաջնջումի պիղծ տօնը ուղեցին սարքել . . . :

«Բայց մենք, դարաւոր, պողպատեայ ըմբուտներ մեր արիւնի, մեր երջանիկ, մեր սրբազան ճամբուն վրայ անսահման նոր կեանքին, նոր Արշալոյսին, և նոր Գաղափարին յաղթական դրօշակը կանգնեցին'ք, բարձրացուցին'ք վեհօրէն ի տես աշխարհի :

«Ու մենք ձեզի համար կ'ապրինք, ձեզի համար կ'քնարերգենք այսպէս. մեր արիւնէն աւիւն, մեր աճիւնէն թըռիչք և մեր ոսկորներէն ալ վահան առնելով զինուեցէք, զինուեցէք, ո'վ վրէժի արդար և անողարտելի զինուորներ, այլևս ձերն է ծամրան, Յոյսի ծամրան, Լոյսի ծամրան, Ուխտի ծամրան :

«Բայց, դուք, ո'վ մեր պատուական, մեր թանկագին խլեակներ, մեկնելէ առաջ խոնարհեցէ'ք, խոնարհեցէ'ք մեր դրօշին, ձեր դրօշին, Հայաստանի դրօշին եռագոյն :

Մ. ՌԱ.ԱԿՈՒՆԻ




### ԶՈՒԱՐՃԱԼԻ ՆՕԹԵՐ

Մահամերձ միլիոնատէր մը, — որ այնպիսի կեանք մը անցուցած էր ուսկից գոհ բլլալու քաջութիւնը չունէր, — քովի քահանային ըսաւ. «Եթէ 100,000ի չափ տողար ընծայեմ եկեղեցիին, փրկութիւնս կրնա՞մ ապահովել : — Շրականապէս չեմ կրնար վճռել, պատասխանեց քահանան, բայց կ'արժէ փորձել» :



## ԵՐԿՈՒ ԹԵՒԵՐ



«Երբոր կը տեսնեմ ես թռչուններսւն  
Թեւերը թրթռուն,  
Շատ նախանձ կ'զգամ եւ սրտիս խորէն  
Կ'ըսեմ դառնօրէն .  
Ինչո՞ւ , սլանալու համար դրախտն ի վեր ,  
Զունիմ ես թեւեր»:

«Թռչունի երկու թեւեր , սիրելի՞ս ,  
Է՞հ , դուն ալ ունիս:»

— «Ո՞ւր են , ես զանոնք չեմ տեսներ , մայրիկ:»


— «Երբ ծայնով քաղցրիկ  
Ամէն առաւօտ , ծունը իջած , ժպտուն ,  
«Հայր մեր» կ'ըսես դուն՝,  
Եւ Աստուծոյ դէմ , անուշիկ տրղաս ,  
Սիրտըդ կը բանաս .

Այդ աղօթքդ ինքնին թեւ մըն է յարմար  
Թռչելու համար:»

— «Երկրորդն մըն է , մայր , առաջինին պէս  
Զայն չեմ տեսներ ես:»

— «Երբ քենէ կ'ուզէ մէկ խեղճ մուրացիկ  
Պատառ մը հացիկ ,  
Եւ դուն , ո՛ւր որ կայ ցաւ , զրկանք մը նոր  
կը հասնիս անոր ,  
Ողորմած սիրտով բարիքն որ կ'ընես  
Դուն խնդումներես ,  
Երկրո՛րդ թեւն է որ՝ նըման թռչունի՝  
Քեզ դրա'խտ կը տանի:»

ԱՂԱՐԱ. ՓԱՆՈՍԵԱՆ



## ԴԻՒՑԱԶՆ ՆՈՒՊԱՐ

«Հօրար Լեւոն ինծի նուէր տուաւ Հայկ Դիւցազն մը և — Քեզ տեսնեմ, դուն ալ հերոս մը եղիր — ըսաւ։ Հերոս մը, ո՞հ, այո՛, ես շատ կը սիրեմ հերոս մը ըլլալ։ Փառաւոր ձիու մը վրայ հեծնել, մէջքս սուր կապել, Բելին յաղթել, վիշապը սպաննել, գեղանի տիկիններ ազատել։ Մեղք որ ձիս հեծելանիւս է և սուրս՝ զմելի մը, տարիքս ալ՝ պղտիկ։ ի՞նչ կ'ըսես մայրիկ»։

Այս խօսքերը ըսողը ցանու երես, շեկ մազերով, միջահասակ, թիկնեղ պատանի մըն էր։ Պէտք է խոստովանիլ թէ անոր արտաքինը հրապուրիչ չեր։ բայց մայր մը իր զաւակը կը պաշտէ ուստի Նուպարի մայրն ալ անոր կարեւորութիւն կուտար և լրջութեամբ պատասխանեց։

— «Նուպա՛ր, ալ աշխարհիս մէջ ո՛չ Բէլ մնաց, ո՛չ ալ թունալից վիշապ, անոնց տեղ մարդիկ կը բաւեն . . .։ Միայն թէ քաղութիւնը տարիքի չի նայիր և երբ առիթը ներկայանայ՝ նոյն իսկ քեզի պէս տղայ մըն ալ կարօտին օգնութեան կրնայ հասնիլ»։

Նուպարին ծնողքը կը բնակէին Այ Սթէֆանոս գիւղը, առտուան արեւը փարոսին ետեւէն կամաց կամաց վեր կը բարձրանար և իր ոսկի ճառագայթներով կ'ողողէր տղուն շէնչող, համարձակ դէմքը։ Ծառերուն տերեւները դուրսը պարտէզին մէջ շրշիւն հանելով կարծես զինք կը հրաւիրէին վազել վազվզելու։ Իր մօրը երեսը նայեցաւ անոր կամքը իմանալու, ան ալ գլխով հաւանութիւն տուաւ։

Ուստի նետուեցաւ հեծելանիւին վրայ, մինչեւ Ֆիլօրիա արշաւեց և բաւական զուարձանալէն ետքը գիւղ վերադարձաւ։ Ցորենկը կը մօտենար, փողոցները ամայացած էին և հեռուն միայն կը տեսնուէր ուշ մնացած սպասուհի մը որ աղջընակի մը ձեռքէն բռնած ոլքաւալով յառաջ կուգար։

Միջոց մը անհոգ կինը թողուց աղջնակին ձեռքը և դարձաւ ապակեփեղկէ մը ներս դիտելու։ Մինակ մնացած աղջնակը կանգ առաւ, չորս կողմ նայեցաւ և յետոյ մայթէն իջնելով սալայատակին մէջ տեղ շտկուեցաւ։

Նոյն միջոցին լսուեցաւ ձիու մը ոտնատրոփը։ Նուպար՝ ետին դառնալով, տեսաւ կատղած նժոյգ մը որ կարծես հովերուն հետ արագութեան մրցումի ելած, քառարշաւ կը սուրար։ Ինք կը գտնուէր ճիշդ եկող ձիուն և աղջնակին մէջ տեղը, եթէ մէկ կողմ քաշուէր՝ անիկայ կոխկոտուելով ստոյգ մահուան կը մատնուէր։


Ո՛չ, ամէն գինով աղջնակը ազատելու էր, դարձուց հեծելանիւր, կտրեց ձիուն ճամբան, վրան նետուեցաւ և բոլոր ծանրութեամբ կախուեցաւ սանձէն։ Յանկարծակիի եկած ձին գլուխը վեր առաւ, աշտանակեց։ Նուպարին ոտքը գետնէն կտրած օղին մէջ կախուեցաւ, բայց սանձը չը թողուց ձեռքէն։

Կենդանին գրգռուեցաւ, գլուխը ցնցեց, առաջ ծռեցաւ, ետևի ոտքերով կից նետեց։ Այս անգամ տղան չի կրցաւ տոկալ և գետնի փոշիներուն մէջ կոնակին վրայ փոռուեցաւ, իսկ ձին վրայէն ցատկեց, անցաւ, գնաց։ Աղջնակը փրկուած էր, բայց իր ազատարարը՝ մոռցուած։ ո՛չ հանդիսատես կար զինք ծափահարող ոչ ալ լրագիրներ իր անունը հռչակեցին։ Զանցառու սպասուհին խելայեղ աղջնակին թևէն քաշեց, գիրկն առաւ, փախաւ, գնաց։

Նուպար վայրկեան մը անզգայ գետնին վրայ տարածուած մնաց, ետքը սթափելով՝ ոտքի ելաւ։ ճակատը կարիւնէր, հագուստը՝ պատռած և հեծելանիւր կոտրած էր։ Ի՞նչ փոյթ, ինք աղջնակը ազատած էր, ուստի կաղն ի կազը քաշկըստուելով տուն հասաւ։

Մայրը ջանաց վէրքը դարմանել և վէրքը մեղմել։ «Աա'յը րիկ, կըսէր տղեկը, կրնա՞յի ձգել սր աղջնակը մնոնի, ըսէ՛, կրնայի՞»։ Մայրը անոր վիրաւոր ճակատը համբուրելով ըսաւ։ «Դուն իմ քաջ ասպետս, նորատի դիւցազն մը և իմ փառքս ես, որդեա՞կ»։

## ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒԻ ԿԱԿԱԶԼ



Կարմիր ծաղիկ Հայաստանի ,  
Սրտիս վրայ միշտ կենդանի ,  
Բացուէ՛ հզօր եւ գեղանի  
Քանի Հայը արիւն ունի :

Պատերն ի վար , պատերն ի վեր ,  
Պոռթկա՛ Հայուն ցաւն ու աւեր ,  
Ճեղքէ՛ մոխիրը մթաստուեր  
Բոց նայուածքովը կարեւիքէր :

Կոտրած սխնին եւ թեւաբեկ  
Խաչին անհուն ստուերէն հէք  
Ժայթքէ՛ բոցէ ժպիտը շէկ  
Արշալոյսին մէջ ահաբեկ :

Զի փափկասուն նարնջենին ,  
Պէնկալեան վարդն ու նուռն ինքնին ,  
Ամէն անոնք որ բոց ունին  
Բոլորտիքը կը տժգունին :

\* \*

Աւերակին անցորդն յիմար  
Կը հարցընէ . «Խնչպէս ծնար ,  
Երբ ներբաններս դողահար  
Դեռ տաք մոխըն փախս կուտան յար :

«Երբ կանգուն չէ՛ ո՛չ մէկ մարմար .  
Երբ խոտին կեանքն խև՝ անհընար  
Երբ ամէն տեղ՝ քարէ սընար ,  
Խնչպէս ծնար , խնչպէս ծնար» :

«Երբ կաղնիներն են ածխացեր .  
Երբ հալեր իսկ են զանգակներ ,  
Եւ աղօթքն՝ ա՛լ կրակէ ըստուեր ,  
Ի՞նչպէս , ի՞նչպէս հոս են բացուեր:»

Աւերակին ծաղիկն հզօր ,  
— Միակ կոյսը մինչեւ այսօր —  
Իր բաժակին մէջէն ըստոր  
Պատասխանեց. «Անցո՞րդ խոժու ,

«Թերահաւատ եւ ցաւագին  
Ի՞նչ կը հակիս այս բաժակին ,  
Ես արիւնին Զայնն եմ ուժգին ,  
Հրայրքն անվերջ հոգեվարքին : . . .

«Խտացումն եմ սառ արեւներուն ,  
Բոցն եմ ինկած աստղին թրթռուն ,  
Եւ սիւներու տակ երերուն՝  
Հաւատքի կայծն եմ տոչորուն . . . :

«Թեւերուն վրայ Տառապանքին ,  
Վկան՝ բոլոր Կեանքին ուժգին ,  
Կը վերապրիմ խանդով նախկին  
Զոհերն որ իմ տակ կը պառկին:»

Եւ անցորդն որ նախանձարեկ  
Քաղեց ծաղիկն այն բոցաշէկ ,  
Ինկա՛ւ , չելա՛ւ ոտքի երբէք .  
Այրա՛ծ էին մատներ բեկրեկ :

ԵԳՈՒՅՈՐԴԻ ԳՈՒԱՆՃԵԱՆ



## Ա Ղ Բ Ի Խ Ը Ը

### ՎԵՐՅՈՒՇՈՒՄ ՄԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ ՄԱՆԿՈՒԹԵՆՔՆ

Արագ ոստումով մը կ'անցնիմ ժամանակի այն հսկայ պարիսպներէն՝ որ զմեզ կը բաժնեն Պետրոս Դուրեանի երջանիկ օրերէն, երբ մեր փոքրիկ բանաստեղծը՝ դեռ տղայ, բայց իր բարեմոյն և հեղահամբոյր բնաւորութիւնով կ'առինքնէր ընդհանուր սէր և համակրանք։ Անոր մանկական տարիներէն կ'արտացոլար իր անտիական հասակի սրբութիւնը։ Անոր յիշատակը խնկաբոյր բան մը ունի իր մէջ և անոր անուշութիւնը տարիներ վերջ ալ կարծես կ'զգաս։

Պետրոս Դուրեան համեստ և վեր ամէն տղայական թեթեւութիւններէ, հասուն հասակի կանխահաս լրջութիւնով մը օժտուած՝ կը ներկայանար իւսկիւտարու իր ծննդավայր Նոր Թաղի մէջ։ Ո՞վ զիտէր սակայն թէ օր մը ան հիանալի ճախրանքով մը պիտի արփաթեւէր Պառնասի բարձունքը ու իր քնարին աղու երգերը հնչեցնելով հայ ժողովուրդին մէջ՝ իր անունը պիտի դրոշմէր յաւերժութեան կնիքով ամէն սըրտերու մէջ։

Դուրեանի մանկութեան օրերու վայելած սիրոյ ճառագայթումն է հետեւեալ դրուագը։

\* \* \*

Նոր Թաղի Ա. Կարապետ Եկեղեցիին առաջքի երեք աղբիւրները ամէն իրիկուն ժամադրավայր կ'ըլլային խուռն բազմութեան մը ու անցուդարձը կը դժուարացնէին այն նեղ փողոցին, որ հիմա լայնցած է հրդեհի պատճառաւ խիտ բնակարաններու անհետացումով։ Հոն անպակաս էին կազն և կոիւ և ոտնձգութիւններ իւրաքանչիւրի կողմէ ժամ առաջ իր ամանը կամ սափորը լեցընելու։ Այդ խառնակութեան մէջ

ոչ մէկը թոյլ կուտար իր կարգը զոհել ուրիշի մը ու  
ամէն մէկը իրը լեցընելու աճապարանքին մէջ իր սպասումի  
ժամերը կարճեցնելու կը հետապնդէր և աղբիւրը լուռ վկայ  
մըն էր ամենուն հեւքոտ առաջնութեան ոգորումներուն :

Պետրոսիկ, սիրոյ ապագայ երգիչը, դեռ նոր դարձած է  
ծեմարանէն իր տունը՝ իր անուշիկ մօրը օգնելու : Մայրը  
կը պատուիրէ անոր շուտով ջուր բերել ու տղան սափորն  
առած կուգայ կը խառնուի այն ամբոխին՝ իր կարգին սպա-  
սելու հաստատ մտադրութեամբ : Եւ ահա ամէն աչքեր կը  
դառնան անոր դարմանք, նոյն բազմութիւնը իրը հրաշքով  
տեղի կուտայ այդ տղեկին առջեւ ու ամէն ոք իր կարգը կը  
զոհէ, որպէս զի այդ տղան իր սափորը լեցընէ շուտով : Ու  
այս կը կրկնուի շատ երեկոներ :

Ժողովուրդը միշտ պաշտում մը, սլատկառանք մը կը  
տածէ մեծութեան առջեւ ու այդ տպաւորութեամբ անշուշտ  
կ'ընկրկի այս տղեկին առջեւ, որ թէն փոքր բայց աւելի լայն  
հորիզոններու յառած էր շատ կանուխէն իր փարփառ աչքե-  
րը :

Ի՞նչ քաղցր, համակրական հաւաստիք Դուրեանի շահած  
ժողովրդական յաղթանակին : Այդ համակրանքը՝ որ շատ եր-  
կար տարիներ առաջ ծայր տուած էր, կը նմանէր արշալոյ-  
սի լուսափիթիթ յղացումին, որուն կը յաջորդէ արեւը իր  
համատարած պայծառութեամբ : Այսպէս այդ նախընծայ հա-  
մակրութեան յաջորդած է համաշխարհային սիրելութիւն մը  
մեր բանաստեղծին նուիրուած՝ որուն հողակոյտը չպիտի մնայ  
աննշան ու յիշատակը երբեք չպիտի թառամի» , ինչ որ տենչն  
ու երազը եղած է իւսկիւտառու սիսակին :

### ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՂԵԱՆ

## ՅՈՅՈՒ ԵՐԳԱ

Ի զուր ամպեր կը զոռգոռան  
Կայծակներով հրածորան ,  
Անամալ երկինք մը կապուտակ  
Կը պարզրի հոս կուրծիս տակ :

Ի զուր կեանքի ծովն ամեհի  
Փրփրակուտակ կը փոթորկի ,  
Խաղաղութիւն մը անսահման  
Կը պարուրէ հոգւոյս խորան :

Ի զուր վիշտեր աղեկիզիկ  
Սիրոս կ'ընեն բզիկ, բզիկ .  
Մեծ սփոփանք մը անխորով  
Զիս, կը գրկէ նետ թեւերով :

Ի զուր , ո'վ բախս , զիշեր , ցորեկ  
Կը հալածես զիս յոգնաբեկ .  
Ես ուխտեցի միտ լլալ հաջ ,  
Հերոսի պէս քալել առաջ :

Ի զուր , Ասուած , Դուն իսկ ինձի  
Բաժին կուտաս ցաւի , լացի .  
Յոյս մանսասան վլրադ ունիմ  
Զես զախցախսեր սիրոք Դուն իմ :

ԹՐ. Հ. ԳԱԼՈՎՅԱՆ

## ՆՈՐ ՏԱՐԻԻ ԽՕՍՔԵՐ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ



Նոր Տարիի բոլոր մեր խանդը ձեզի համար է, հայ անմեղ մանուկնե՛ր։ Տարագրուած մանուկնե՛ր, դեռ աքսորի փոշին ձեր ձորձերուն մէջ ու ձեր մորթին վրայ, անապատներու կարմիր արեւուն խանձող հրայքը դեռ ձեր մազերուն մէջ ու ձեր թարթիչներուն վրայ, դուք ամենքդ որ հրաշքով մը կը դառնաք ձեր անհատնում տաժանագին ճամբէն, օրհնեալ ըլլաք ամենքդ ալ, ձեր ապրելու անընկճելի յամառութեամբը։ Այնքան անհանդարտ են ձեր վառվռուն աչքերը ձեր աքսորի քառուղիներուն բիւրազան տեսարաններովը և հակամարտ ճոխ տեսիլքներովը, որ երբ որբանոցի չորս ձերմակ պատերուն մէջ կը զետեղուիք՝ թեւ ու թոփչք կ'ուզէք առնել ու կը հեւաք դեռ մեծ ճամբու մը խոյանքով։ Այդ ճամբան վաղուան ճամբան է այլես, Նոր Տարիին խանդով գըծուած ճամբան, գիտակից վերադարձը դէպի Մեծ Տունը, դէպի հայուն ճշմարիտ Հայրենիքը։ Մի՛ նայիք ձեր ետին, հոն անդունդ մը կայ ձեր մայրերուն արցունքներովը լեցուած, նայեցէ՛ք ձեր մէջ ուր պահուած կան ձեր ծնողքներուն ու ձեր պապերուն լաւագոյն իղձերն ու հաւատքը, անոնց հոգին ու անոնց վերջին խօսքը ու վերջին ճիգն, անոնց իտէաւը ձեր թարմ անմեղ արիւնին մէջ կ'ապրի աւելի կենդանի աւելի՛ մեծ բարախումով։ Դուք մեր յոյսն էք, մեր տանջանքին պսակումը, մեր արցունքներուն ծիածանը, մեր վեր-

քերուն զովացումն ու քուժումը, մեր աքսորի ճամբուն արշալոյսը, դուք յաղթանակն էք մեր կոտրած բաղուկներուն, անսայթաք ուղին մեր կթոտած ծունկերուն, կայծը մեր մարած օճախներուն, ստեղծիչ ջերմութիւնը մեր ցրուած աճիւններուն։ Դուք հզօր ու յաղթական վաղորդայնն էք մեր անիծուած ու անիրաւուած երէկներուն ու դժբաղդ Այսօրին որ կը տեսնէ դեռ մեր վէրքերուն արիւնահոսումը։ Մի՛ նայիք ձեր ետին, նայեցէ՛ք միշտ ձեր առջեւ, Նոր Տարիին պայծառ հորիզոնին մէջ։ Մի՛ նայիք ձեր մեռած գողտրիկ անխող եղբայրներուն որ ճամբուն վրայ ինկան յոգնաբեկ անշունչ՝ անէծքի կայծակներ սեղմած իրենց ձորձերուն մէջ։ Դուք մե՛ծ հասնողներն էք, Ամայութեան ու Աւազի մեծ անիմաստ ճամբէն դէպի գերագոյն Իմաստը, դէպի Հայուն ձևմարիտ հայրենիքը։ Դուք շարունակութիւնն էք մեր յողնած սրտերուն բարախումին. դու՛ք էք որ անհուն պիտի ընէք հայուն Սիրտը ու պիտի հնչեցնէք իր անողոք Դատաստանը դարէ դար, աշխարհի ամէնէն ահեղ արձագանգովը։ Հին տարին պատուհասը բերաւ մեր Խարուածի ու Անիրաւուածի ուսերուն վրայ ու նաև ձեր անմեղ անդամներուն վըրայ, Նոր Տարին թո՛ղ Յաղթանակը, Լոյսը ու Հաւատքը բերէ Զարիքին դէմ, ձեր դնդերներուն քնացող թարմ ուժին մէջ, Նոր Տարին՝ թող մեր անհուն Խարոյկին բոցովը գծէ ձեր լուսաւոր անսխալ ճամբան։ Օրհնեալ ըլլաք, մեծ հասնողներ՝ մանրիկ ու անմեղ ու բռպիկ ոտքերով։ Զերն է ճանապարհը, վաղորդայնը, Նոր Տարին։

## ՔԻՉ ՄԸ ԾԻԾԱՂ



Խեղկատակ մը՝ պարտի համար բանարկուած՝ կը մտածէր.  
Օր մը իւր մօս հրաւիրեց պահանջտրը՝ անզութ ու ծեր,  
Որ օրական տասը դրուշ վճարումով եւ անխռով՝  
Զրկած եր զիև օդէ, լոյսէ, ընտանիքէ սիրազորով .  
Մեծ շտապան իւր ոսկիր վազեց եկաւ եղանի'ի պէս,  
Խորհեղով թէ ա'լ ձանձրացած բանի կեանիքն հաստատապէս՝  
Իւր մարդուկը որոշած եր հասուցանել խան ոսկին  
Եւ արձակուիլ, երբա՛լ; թոի՛լ, ողջազուրել զաւակ ու կին .  
Բանարկեալլը մեծ լրջութեամբ պահանջտրին սա՛նկ խուեցաւ .  
«Բարեկամ, վասուն եղիր, ունիմ ո՛չ մեկ, այլ երկու ցաւ .  
Առաջինը՝ հոս տառապիլ, հեռու մենալ ընտանիքն .  
Երկրորդն աշ՝ իմ տաշիքը չ'կարենալ վճարել ժեզ .  
Սյս ցաւերը անարակոյս պիտի գտնեն իրենց դարւան  
Եթէ ուզես դու եւս տալ հաւանութիւն իմ որոշման .  
Յայտնի է թէ ինձի համար, անմօրէն, եթէ կամիս,  
Երեւ ոսկի կը վճարես սնունդի զիւ ամեն ամիս .  
Ազատ' զիս եւ ամիսը դուս տուր ինձի խիս կամովի  
Երկու ոսկի . մեկ ոսկին աշ առնելիքի վար կ'առնուի» :



«Եեհապես մը, խմանալով որ իւր նախկին մեկ նախարար՝  
Թշուառութեան ներֆեւ կսած՝ դեւափի կորուս պիտի սուրար,  
Եինել տուաւ զրժի ձեւով մեկ հոյակապ քոքապանակ .  
Հու զետեղեց հինգ ոսկինց պանզատուներ մեծաբանակ .  
—Կուզե՞ք ըստեմ, անոր մեջը ճիշ ճիշ երկու հարիւր հաս կար—  
Եւ զայն դրկեց հաւատարմին՝ այժմ ահա հեզ ու անկար .  
Այն վերջինը, որպիս հարկ եր, չեր ուշանար զալ արքունիք՝  
Արսայացել իւր ժիրով ինչ որ ինչ եւ իւր ընտանիք  
Կը պարտիին հանդիպ իրենց յոյժ վեհապառ քարեւարին՝

Որ կ'ամենք սոյն պարզեւով իրենց վիճակ անհնարին .  
Անմիջապէս որ մօտեցաւ՝ բազաւորը կատակասէր՝  
Հոգածութեամբ զանի իւր բով բազմեցնելով անոր կ'ըսէր .  
— Խոսէ՛ , տեսնե՛մ , իշպէս զտար այն երկը զոր ուղարկեցի ,  
— Վեհափառ տէ՛ր , պատասխանեց պաշտպանեալը յոյժ մտացի ,  
Միանչեղի՛ , հիանալի՛ եւ շահեկան այնին շատ որ .  
Անհամբէր եւս ունենալու եւ կարդալու երկրորդ հատուր :  
Միասպէսը շատ հաւելեցաւ պատասխանին այս սրամիս ,  
Գաղափար մը յղացած էր . դեկիֆին վրայ կար նուրբ ժիշտ .  
Յղեց անոր ուրիշ մըն այ՝ առաջինին յար եւ նման՝  
Դարձեալ հազար ոսկեով լեցուն , ապացոյց իւր համարման .  
Բայց այս անզամ դնել տուաւ ճակատին վրայ կափարիչին ,  
Ոսկեզօծեալ ճնիս սառերով . «Հատուր երկրորդ ճակատ վերջին» :



Մանուկ էի . որ մը հայրս իւր զործերով կ'աշխատէր՝  
Երբ մարդուկ մը ներս մտնելով իրեն լսաւ . «Ազնիւ տէ՛ր ,  
Կացութիւնը յոյժ դժբախտ է . դո՛ւֆ եղէֆ ինձ օգնական ,  
Մանաւանդ զի կրնամի կոչուիլ մեկզմեկու ազգական .  
— Ազգական մի՛ , հարցուց հայրս — անշուշտ , ասի պարզ բան մ'է  
— Հսէ՛ , տեսնե՛մ , ո՞ր կողմանիկ — Մեր ճախահայր Աղաւեկ .  
Հայրը խնդաց եւ , դնելով տար փարայ տիրին մեջ ,  
Այս բառերով յուրաքանչիւն կորաւակէց .  
— Ա՛ռ ասիկա , ազգականաց ամբողջ դիմէկ , ինաւիկ .  
Թո՞ղ նոյնչափ տան . ա՛շ կեանիիդ մեջ պէտք չես զգար դրամի :

#### Մ. ՀՈՒՆԵ

**ԾԱՆՈԹ.** — Մեր ազնիւ բարեկամն Պ. Մ. Հունկ քեւել անձանօր մնացած է ցարդ , բայց իր գրական անվիճելի կարողութիւնով յարգելի անձնաւորութիւն մըն է : Երկար տարիներ Գահիրէի մէջ Թրանսական գրեերու վաճառումով զբաղած է , եւ այս զբաղումին հետ մշակած է գրականութիւնը :

## ՄԱՐԳԱՐԷՇԻԹԻՒՆԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ



Մեծ իտէալները կը վարեն աշխարհը :

Անցեալի հսկայ երազատեսներուն համօրէն խորհուրդները, ապագայի մասին անոնց սնուցած ամբողջ հայեացքները կ'իրականանան այսօր :

Մարգարէութիւնները կը կատարուին մի ըստ միոջէ :

Շատ ինչ կը պարտի արդարեւ ներկայ սերունդը՝ հին, խաւարտչին գիշերներէն հեռաւոր ապագայի մէջ շէնշող արշալոյսներուն ոսկի ցոլքերը ընդնշմարել տուող այդ տեսանողներուն : Անոնց ձայնին անսալով ու մանաւանդ անոնց անդրդուելի հաւատքին յենած՝ ձեռքերն ի գործ, աչքերն ի վեր ամբարձած մարդկութիւնը բարձրութենէ ի բարձրութիւն վերելակած իրականացուցած է այսօր անոնց անրջային ոսկի երազանքները :

Դեղփեան պատգամի նման աղօտ ասութիւններ, անորոշ տեսիլքներ ու երազներ, ի մի բան անցեալին մէջ անբացատրելի համարուած մտածութիւններ ու երեւակայութիւններ սաղմնաւորուած, ոգեւորուած կուգան անգամ մը եւս հաստատել թէ մեծ խորհուրդներն չեն մեռնիր, թէ ճակատագրուած են անոնք ի յաւիտենից վարելու աշխարհի բաղդը :

Մեր հիացումը գրաւող, հին աշխարհի փառքերէն, հրաշալիքներէն գերազանցալէս սխրալի ներկայ գիւտերն՝ հարիւրաւո՞ր, հազարաւոր տարիներ առաջ կանխագուշակուած՝ լրումն են սոսկ աստուածամերձ տեսանողներուն մարգարէութեանց :

Երրայական միսթիք հոգիին հզօր ներկայացուցիչներէն ողբանուազն Երեմիա կանխատեսած էր խեկապէս օդանաւերն ու անոնց թորիչքը անսահման տարածութեան մէջ երբ կը գրէր .—

«Ահա՛ թշնամին արծիւի պէս պիտի թռչի և իր թեւերը պիտի տարածէ . . .» :

Արծիւի թեւերով սուրացող, երկինքի կապուտակ դաշտերուն մէջ այնքան շքեղօրէն յածող օդանաւերը կուգան հիմայ բացատրել մարգարէին մութ և կարի վերացական նըկատուած յափշտակութիւնները :

Ու դարե՛ր, դարեր առաջ Նաումնան կանխագուշակութիւններն իրականացած կր տեսնենք այսօր ինքնաշարժ կառքերուն և թէնքերուն կրկնակ գիւտերով :

«Կառքերը փողոցներուն մէջ պիտի կատղին, հրապարակներուն մէջ իրարու պիտի բաղխող, զահերու երեւոյթներով, փայլակներու պէս վազող, հուր ու ծուխ ժայթքող կանխագուշակուած այդ կառքերն ու անողոքելի թէնքերն ճակատագրուած էին աշխարհասասան պատերազմին ցանկալի վերջնակէտը դնելու :»

Փողոցներուն մէջ կատղող, հրապարակներուն մէջ իրարու բաղխող : Զահերու երեւոյթներով, փայլակներու պէս վազող, հուր ու ծուխ ժայթքող կանխագուշակուած այդ կառքերն ու անողոքելի թէնքերն ճակատագրուած էին աշխարհասասան պատերազմին ցանկալի վերջնակէտը դնելու :

Երկաթուղիի, ինքնաշարժ կառքի, անթել հեռագրի և ընդուլեայի մասին որոշ ու սլայծառ գուշակութիւններ ըրած էր, Մայր Շիփթըն (1481) երբ յափշտակուած ապագայի երազներով՝ հեղիկ ու յուշիկ կը պատկերացնէր իր տեսիլքները այնքան ուկեղինիկ : —

«Կառքերը առանց ձիու պիտի ընթանան արկածներու առթած ցաւով պիտի լեցուի աշխարհը, երկրին շուրջը ի մի ակնթարթ պիտի թաղեն խորհուրդները, ներկայ աշխարհը ամբողջութեամբ պիտի յուզուի, մարդիկ պիտի սուրան առանց անասունի փակուղիներու ընդմէջէ, ջուրի տակէ պիտի ճամբորդնն, հո՛ն պիտի ապրին, խօսին ու քնանան օդին մէջ ալ պիտի երեւին անոնք սև, ճերմակ, կապոյտ գոյներով» :

Այս ամբողջ մարգարէութիւնները կատարուած են հիմա տառ առ տառ, մարդիկ գերիշխան տէրն են այսօր ծովուն և

օդին ու կը նկրտին վեհապետել ընութեան օրինաց իսկ վերև :

Մարգարէական վսեմ շունչով օծուն Ա. Թէննիսըն սաւառնակներու ճախրանքն ու անոնց մղած կատաղի կոփւներն նախատեսած՝ իր իսկ ականջով որպէս թէ կը լսէր ահռելի պայթումներ օդին մէջ ու կը տեսնէր իր աշքերով մաղուիլը կրակէ անձրեւներու . . . :

«Քանի հազար փարախ ծովիրու տակ»ի մարգարէական գիրքովն Ժիւլ Վէրն կը գուշակէր ընդծովեաներ և անսահման հրաշալիքներ ծովուն յատակը ու երբեմնի ցնորք, բանդագուշանք նկատուած երեակայութեան այդ վառ արդիւնքներն գիտութեան լոյսով իրականացած, հաստատուած կը տեսնենք հիմա :

Ու վերջապէս՝ Ռուլթըր Սքօթ անթել հեռագիրը, անոր կատարած հրաշալի գերը կը նախաձայնէր գոզցես՝ երբ այնքան զմայլելի ու նկարագեղ ոճով կը գրէր :

« . . . Այդ հեռաւոր հորիզ ններուն տակ ինծի վիճակնցաւ հանդիպիլ Միքայէլ Սքօթ մինակեացին որ երբ Սալամանքայի քարայրին մէջ իր մոգական գաւազանը կը ճօնէր, հեռուն Բարիդի մէջ Notre Dameի զանդակները կը հնչէին» :

Այս՝ պողպատ ձողեր. երկնքի լոյծ կապոյտին մէջ մըխրճուած, մոգական գաւազաններ ելեքտրական հոսանքի դիւթական հպումով մը ցնցուած կը հնչեցնեն այսօր ո՛չ միայն Notre Dameի, այլ ամբողջ աշխարհի բոլոր զանդակները : Մարդկային խորհուրդներն ու խօսքերն կ'արձագանգէ հիմա ի քթթել ական արիեղերքի ամէն կողմերը :


Փա՛ռք այդ տեսնողներուն, փա՛ռք մարգարէներուն որ անհունին մէջ միսրճուած, կը ծծեն անոր նեկարէն ու նըշմարելով անըմբոնելի հրաշալիքներ նկարագեղ կը գծեն մեզ անոնց ահովապատկերը մանակից ընելով և մեզ ապագայի փառքերուն :

Փա՛ռք այդ տեսնողներուն :


Պէպէք

ՌԱԶՄԵՐԻ

ԱՐԻՒՆՈՏ ԷԶԵՐ՝ ՍԳԱՒՈՐ ՂԱՐԻՊԻՆ ՕՐԱԳՐԻՆ ՔԱՂՈՒԱԾ



## ԱՐԹՎԱՄԻՏ ՄԱՆԿՈՒՀԻՆ



Կորտուած Զարմինեիս ողբայի յիշատակին

1915ի արիւնոտ ամառն էր, վերջին ամառը տարագիր հայութեան . քաղաքական անգութ խորշակը անխնայ կը թառամեցնէր էն ընտիր ծաղիկները հայկական բուրաստանին : Զարհուրելի սպանդին յաջորդած էր անօրինակ տեղահանութիւնը կանանց, կարմիր կարաւանը որ արիւնի և անլուր տառապանքի ճամբէն կը տարու էր : Այդ ահաւոր և յաւէտ անմուանալի սև օրերուն Եւղոկիոյ մէջ «թէք խանութի» շիտակ ճամբէն անցնող պատահական ճամբորդի մը ուշադիր նայուածքը՝ մօտակայ նորաշէն տան մը բարձրահայեաց պատուհաններէն մէկուն առջև առանց դժուարութեան պիտի նշմարէր փոքրիկ սիրուն աղջիկ մը՝ որ իր խոսկոպիկներով ծածկուած նազելի գլուխը դուրս ձգած առտուընէ մինչև իրիկուն փողոցին անցուդարձը կը դիտէր, հակառակ տարիքին անմնղութեան վշտալից և մտայոյդ երեւոյթ մը ունէր ան, մինչ իրեն տարեկից փոքրիկներ դուրսը կը խաղային անտարբեր . այդ հրեշտակը միշտ կայնած այդ խորհրդաւոր պատուհանին առջև վաղահաս վտանգի մը կանխահոգութեամբ իրը փոքրիկ պահակ ինքնաբերաբար կը հսկէր և կը պահպանէր այն տունը՝ ուր պահուած էր իր հայրիկը՝ կեանքէն յուսահատ . . . :

Հազիւ հինգ տարեկան Զարմինէս էր ան զոր դեռ քանի մը օր առաջ նպաստաւոր պարագայի մը տակ իր միամեայ քրոջը և տարաբաղդ մօրը հետ յաջողած էի փախցնել տալ

Նիքսարէն եկած տարագիր կանանց հսկայ կարաւանէն։ այսպէս ճիշտ տարի մը վերջ դարձեալ կը միանայի կնոջս և երկու զաւակներուս։ անակնկալ միացում մըն էր։ սակայն աւաղ որ երկար չպիտի տեւէր։ կողոպտուելէ, անլուր տանջանքներու և տառապանքներու։ ենթարկուելէ, 7-8 ժամուան ճամբորդութիւնը Յօրէն կատարելէ վերջ՝ մահուան ճամբուն վրայ ժամանակաւոր շեղում մը միայն ընելով եկած էին իմ մօտ, քիչ մ'ալ ինծի հետ և ինծի համար տառապելու։ Զիրենք գտած ըլլալուս համար ուրախ էի, սակայն մուայլ ստուեր մը կը ձգուէր խորհրդածութեանցս վրայ և սև կանխազգացում մը կը կրծէր սիրտս խորհելով թէ՝ այդ երջանկութիւնը շուտով պիտի խլուէր ինձմէ։

Զուլումի և մահուան փախստականն էի՝ օդէ, սնունդէ և լոյսէ զրկուած։ և իմ հնգամեայ Զարմինէս մեծէ մ'աւելի կ'զգար վիճակիս փափկութիւնն և գիտէր թէ իր հայրիկին կեանքը վտանգի տակ էր։ Իր ատելութեան ու սոսկումին առարկան փօլիսներն էին միայն, ինչու որ անոնց վայրագութիւնն աչքովը տեսեր և փափուկ մարմնոյն վրայ կրեր էր։ կը յուզուէր և կը ջղայնանար երբ փողոցէն պաշտօնական զգեստով մէկը կանցնէր։ զինուորականն ու ժանտարման մէկ անունով միայն կը ճանչնար «փօլիս»։ չէ՞ որ արդէն ամէնքն ալ հայկական ջարդերու միջոցին տարբեր անուններով միեւնոյն դերը խաղացին։ Խեղճ Զարմինէս արշալոյսին հետ կարթննար և մինչեւ վերջալոյս փողոցին անցուդարձը կը զննէր, և եթէ սլատահմամբ զրան առջեւէն համազգեստով կառավարական պաշտօնեայ մը անցնէր, այլայլած կը դառնար և յուզուած իրեն յատուկ մանկական շեշտով մը ինձ կազդարարէր՝ «հայրիկ փօլիսները կուգան կոր...» մանաւանդ հայրիկ բառը շատ մեղմ կարտասանէր, գիտնալով որ վտանգաւոր բառ մ'էր այն։

Օր մը երբ խիստ տխուր խորհրդածութեանց մէջ թաղուած այդ անել կացութենէն փրկուելու ելք մը կը մտածէի, փոքրիկը շարունակ կը ճշար և կուլար օրօրոցին մէջ, մինչ

մայրը գործով կը բացակայէր տունէն . այդ պահուն յուղ-  
մունքով դիտեցի թէ՝ ի՞նչպէս Զարմինէս մօտեցաւ իր փոքրիկ  
քրոջ օրօրոցին և զայն օրելով ըստ՝ իր ձայնին համակ  
գուրգուրու շեշտ մը դնելով .

— Քնացի՛ր, մի՛ լար անուշիկ Փայլիկս, հիմայ ձայնէդ  
փօլիսները գալով հայրիկնիս կը տանին, ա՛լ քնացիր, երբ  
հայրիկը ազատի և փարա ունենայ շուկայէն մեզի պտուղ  
պիտի առնէ . . . :

Փօլիսնե՛ր, վայրագութեան ու անգթութեան տիպար  
ներկայացուցիչներ . երբէ՛ք, ա՛յո երբէ՛ք չպիտի կրնան քա-  
ւել այն մեղքը՝ որուն հեղինակները հանդիսացան . օրօրոցին  
մէջ ննջող անմեղ մանկիկն անգամ անոնց անունէն և ձայնէն  
սոսկալով կը լոէր :

Սիրելիներուս հետ անցուցած վերջին օրս էր . առաւո-  
տուն շատ կանուխ տան վերնայարկի սենեակներէն մէկուն  
մէջ կինս և զաւակներս անգիտակցաբար վերջին անգամ  
մալ զիս շրջապատած՝ մօտաւոր տիսուր անցեալին վերյիշումը  
կընէինք, երբ յանկարծ դուռը զարնուեցաւ ուժգնօրէն,  
ամէնքս ալ տժգունած էինք : Զարմինէս կարծես զսպանակէ  
մը մղուած պատուհանը թռաւ և սարսափահար ինձ դառնա-  
լով՝ «հայրի՛կ, փօլիսները կուգան կոր» հծծեց : Ա՛հ, այդ  
վերջին սարսուալի հծծիւնին տիսուր արձագանգը մինչեւ այս  
օր սրտէս կը լսեմ, տեսայ թէ՝ այդ անմեղ հոգին կուլար,  
ինչու որ փօլիսները եկած էին ու զուցէ իր հայրիկը պիտի  
տանէին, վա՛խ, այն օր վերջին անգամն էր որ լսած էի  
այդ հրեշտակ-մանկան ձայնը և տեսած անոր արցունքու  
դէմքը . այո՛, փօլիսները եկան, սակայն փոխանակ զիս տա-  
նելու Զարմինէս, մայրն ու փոքրիկ քոյրը խլեցին գրկէս  
տարին ու ա՛լ չի վերադարձուցին . . . :

Ա՛խ, ո՞ւր էք արդեօք տարաբաղդ Զարմինէ՛ս . այժմ  
սգաւոր հայրիկդ ձեր խնկելի յիշատակը կ'ողբայ անմիսիթար :  
Դուն որ տկար ձեռքերովդ փօլիսներու վայրագութենէն  
հայրիկդ կուզէիր ազտտել, սակայն, աւա՛զ, հայրիկդ չի

կրցաւ ձեղ պաշտպանել և ազատել . . . զիտեմ դուք ալ  
բարբարոսութեան զոհերը եղաք, և ձեր նուիրական նշխար-  
ները անթաղ մնացին անծանօթ հողերու վրայ: Երբ մահուան  
անգութ հարուածը կընդունէիք, արդեօք փոքրիկ սիրտդ  
չի բողոքեց անզգայ հայրիկիդ դէմ, որ ձեր մահէն վերջ  
դեռ կապրի . . . : Ազատուած հայրիկիդ օր մը երբ փարա  
ունենայ . . . փոխան պտուղի՝ վրէժի կարմիր ծաղիկներ նու էր  
պիտի բերէ ձեզի:

Այժմ ան հիմա ողբակոծ բուի մը նման կը շրջի ձեր  
մեկնումով ամայացած և աւերուած մեր հայրենի օճախներուն  
մէջ կը վայէ տիսրագին՝

«Ամպեր եկան, մուքը պատեց

Մինակ նսած կուլամ ես.

Սիրելիիս կորած եարիս

Սուզ ու օհւան կանեմ ես :»

### ՊԵՏՐՈՍ ՊՈՆՏԱՑԻ

### ԶՈՒԱՐՃԱԼԻ ՆՕԹԵՐ

Ասորագէտ մը Եգիպտագէտին առջեւ կը պարծէր թէ  
«Ասորիները ելեկտրական հեռագիր կը գործածէին, վասն զի  
թելեր գտնուեցան հոն»: — «Մենք ընդհակառակը, պա-  
տասխանեց միւսը, թելի կտոր մըն ալ չկրցանք գտնել Եգիպ-  
տոս, վասն զի անոնք անթել հեռագրութիւն կը գործածէին»:



# ԿԱՐՀԱՌՈՅ ՕՐԱՑՈՅՑ 1919 ՏԱՐԻՈՅ

Լատինաց  
Յունաց

## ՅՈՒՆԱՑՈՅ (31 օր)

|    |    |                                      |
|----|----|--------------------------------------|
| 14 | 1  | ԳԵ. ԿԱՂԱԾԴ                           |
| 18 | 5  | ԵԲ. ՃՐԱԳԱԼՊՍ                         |
| 19 | 6  | † Կիր. ԾՆՈՒՆԴ                        |
| 20 | 7  | † ԲՀ. ՄԵԽԵԼՊ                         |
| 26 | 13 | † Կիր. ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻւն<br>ՅԱ.Ի ՔԲ.Ի |
| 27 | 14 | ԲՀ. Տօն Ա. ՅՈՎՆԱՆՆՈՒ Կա-<br>րապետի   |

Ն Փ

|    |    |                                                 |
|----|----|-------------------------------------------------|
| 29 | 16 | ԵԲ. Ա. 40 Մանկանց                               |
| 30 | 17 | † Կիր. Դատաւորին                                |
| 1  | 19 | ԳՀ. Լատինացւոց Ապրիլ                            |
| 4  | 23 | † ԵԲ. Ա. Գրիգորի Լուսա-<br>ւորչի մուտն ի վիրապն |
| 6  | 24 | † Կիր. Գալստեան                                 |
| 13 | 31 | † Կիր. Ժաղկազարդ                                |

## Ա.ՊՐԻԼ (30 օր)

|    |    |                                             |
|----|----|---------------------------------------------|
| 30 | 17 | ԵՀ. Անտօնի ճգնաւորի                         |
| 1  | 19 | ԵԲ. Ա. Թէոդոսի                              |
| 2  | 20 | † Կիր. Հարսանիք                             |
| 4  | 22 | ԳՀ. Վահանայ Գողթնացւոյն,<br>Եւգինեայ կուսին |
| 9  | 27 | † Կիր. Բարեկենդան Առա-<br>ջաւորաց           |

|    |   |                                                                 |
|----|---|-----------------------------------------------------------------|
| 15 | 2 | Աւագ ԳՀ. Տասն Կուսանաց                                          |
| 17 | 4 | † Աւագ ԵՀ. Յիշատակ ընթ-<br>րեաց Քրիստոսի, Երեկոյին<br>ոտնալուայ |

## ՓԵՏՐՈՒՅ.Ր (29 օր)

|    |    |                                                                                            |
|----|----|--------------------------------------------------------------------------------------------|
| 15 | 2  | ԵԲ. Ա. Սարգսի և Որդւոյն<br>Մարտիրոսի                                                       |
| 16 | 3  | † Կիր. Հարսանիք                                                                            |
| 17 | 4  | ԲՀ. Ա. Ասովմանց                                                                            |
| 18 | 5  | ԳՀ. Ա. Սուքիանց                                                                            |
| 20 | 7  | ԵՀ. Ա. Ասկեանց Քահանայից                                                                   |
| 22 | 9  | ԵԲ. Ա. Իսահակայ Պարթև<br>Հայրապետի                                                         |
| 24 | 11 | † ԲՀ. Ա. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԶՕ-<br>ՐԱԿԱՐԱՑ ՄԵՐՈՅ, 1036<br>Վկայից. Յիշատակ ՄԵԽԵ-<br>ԼՊ և Տօն Ազգային |

|    |    |                                     |
|----|----|-------------------------------------|
| 21 | 8  | † ԲՀ. ՄԵԽԵԼՊ                        |
| 27 | 14 | † Կիր. Նոր Կիրակի                   |
| 29 | 16 | ԵՀ. Լատինացւոց Մայիս                |
| 1  | 17 | † Կիր. Կանանչ Կիրակի                |
| 2  | 18 | ԵՀ. Լարսանիք Տաճկաց Խըտ-<br>րէլէզ   |
| 4  | 21 | † Կիր. Կարմիր Կիրակի, Հար-<br>սանիք |
| 6  | 23 | ԴՀ. Հարսանիք Տաճկաց Խըտ-<br>րէլէզ   |
| 11 | 28 | † Կիր. Կարմիր Կիրակի, Հար-<br>սանիք |

## ՄԱՅԻՍ (31 օր)

|    |    |                                                   |
|----|----|---------------------------------------------------|
| 25 | 12 | ԳՀ. ԴԵԼՈՆԴԵԱՆց                                    |
| 27 | 14 | † ԵՀ. ՏԵԱԼԻՆԴԱԼԻԱԶ                                |
| 29 | 16 | ԵԲ. Կ. Պոլոյ Սուրբ Ժողո-<br>վոյն. Լատինացւոց Մարտ |
| 1  | 17 | † Կիր. Բուն Բարեկենդան<br>Եւս Յունաց և Լատինաց.   |

|    |    |                                                         |
|----|----|---------------------------------------------------------|
| 18 | 5  | † Կիր. Երեւման Խաչ Հար-<br>սանիք                        |
| 25 | 12 | † Կիր. Հարսանիք                                         |
| 29 | 16 | † ԵՀ. Համբարձում Քրիստոսի<br>Եւս Յունաց և Լատինաց.      |
| 30 | 17 | Ուր. Տաճկաց Բամական (29)                                |
| 1  | 19 | † Կիր. Լատինացւոց Յունիս                                |
| 8  | 26 | † Կիր. Հոգելիքալուստ, Եւս<br>Յունաց և Լատինաց. Հարսանիք |

## ՄԱՅԻՍ (31 օր)

|    |    |                  |
|----|----|------------------|
| 16 | 3  | † Կիր. Անառակին  |
| 21 | 8  | Ուր. Գարնանամուտ |
| 23 | 10 | Կիր. Տնտեսին     |

| L.             | Q. | ՅՈՒՆԻՍ (ՅՈ օր)                                                             | L. | Q. | ՅՈՒՆԻՍ (ՅՈ օր)                                           |
|----------------|----|----------------------------------------------------------------------------|----|----|----------------------------------------------------------|
| 15             | 2  | † Կիր. Եղիա Մարգարէի<br>Հարսանիք                                           | 16 | 3  | Եր. Ա. Գր. Աստուածաբանի                                  |
| 16             | 3  | Բ2. Ա. Հռիփահմեանց                                                         | 17 | 4  | † Կիր. Հարսանիք                                          |
| 17             | 4  | Գ2. Ա. Գայիանեանց                                                          | 18 | 5  | Բ2. Ա. Եւգինէոռի                                         |
| 19             | 6  | Ե2. Ա. Յովհաննու Կարապետի                                                  | 23 | 10 | Եր. Երեսոսի Ա. Ժողովոյն                                  |
| 21             | 8  | † Եր. Ա. Հօրն մերոյ Գր.<br>Լուսաւորչի ելն ի վիրապէն                        | 24 | 11 | † Կիր. Բարեկենդան Ա. Աստ-<br>ուածածնի                    |
| 22             | 9  | † Կիր. Ամառնամուտ                                                          | 30 | 17 | Եր. Տօն Շողակաթին                                        |
| 24             | 11 | Գ2. Ա. Կուսանաց նունեայ և<br>Մանեայ                                        | 31 | 18 | † Վերափոխուում Ա. Աստո-<br>ծածնի                         |
| 26             | 13 | Ե2. Ա. Սահակայ և Յովսեփայ                                                  | 1  | 19 | † Բ2. Մեռելոց Լատին. Մեպ-<br>տեմբեր                      |
| 28             | 15 | Եր. Ա. Ներոէսի Հայրապետի<br>և Խաղայ Եպիսկ.ի Տաճկաց<br>Բամազան Պայրամը Յ օր | 2  | 20 | Գ2. Հարսանիք                                             |
| 1              | 18 | Գ2. Ա. Կոստանդիանոսի և<br>մօրն Հեղինեայ, Լատի-<br>նացւոց Յուլիս            | 9  | 27 | Գ2. Ա. Յովակիմայ և Աննայի                                |
| 5              | 22 | † Եր. Գիւտնշխարաց Ա. Հօրն<br>մերոյ Գր. Լուսաւորչի                          | 11 | 29 | Ե2. Ա. Երիմիայ մարգարէի                                  |
| 6              | 23 | † Կիր. Հարսանիք                                                            | 13 | 31 | Եր. Ա. Առաքելոց Թովմայի                                  |
| 8              | 25 | Գ2. Ա. Դանիէլի Մարգարէի                                                    |    |    |                                                          |
| 10             | 27 | † Ե2. Ա. Թարգմանչաց Սա-<br>հակայ և Մեսրոպայ                                |    |    |                                                          |
| 12             | 29 | Եր. Ա. Տրդատայ թագաւո-<br>րին մերոյ և Աշխէն տիկնոց                         |    |    |                                                          |
| 13             | 30 | † Կիր. Գիւտ տիրոյ Ա. Աստ-<br>ուածածնի, Հարսանիք                            |    |    |                                                          |
| ՅՈՒՆԻՍ (ՅՈ օր) |    |                                                                            |    |    |                                                          |
| 27             | 14 | † Կիր. ՎԱՐԴԱՎԱՐ                                                            | 24 | 11 | † Կիր. Գիւտ Գուռոյ Ա. Աստ-                               |
| 28             | 15 | † Բ2. Մեռելոց, Տաճկաց<br>Զիլդատէ                                           | 28 | 15 | ուածածնի, Հարսանիք                                       |
| 1              | 18 | Ե2. Ա. Եսայեայ մարգարէի                                                    | 29 | 16 | Բ2. Ա. Մտեփաննոսի Տընեց-<br>ւոյ, Գոհարինեայ              |
| 2              | 19 | Ուր. Լատինացւոց Օդոստոս                                                    | 1  | 18 | Գ2. Լատինաց Հոկտեմբեր                                    |
| 5              | 23 | Գ2. Աթանագինէի Եպիսկ.ի                                                     | 6  | 23 | Բ2. Ա. Մամասայ ևն.                                       |
| 7              | 25 | Ե2. Ա. Նախահարցն մերոց                                                     | 7  | 24 | Գ2. Ա. Կուսանաց Փեփրոն-<br>եայ, Մարիանեայ, Եռւ-<br>շանայ |
| 9              | 27 | Եր. Ա. Որդւոց և թուանց<br>Ա. Գր. Լուսաւորչի                                | 11 | 28 | Եր. Ա. Դէորդայ, Ատոկդոսի<br>և Ռոմաննոսի                  |
| 11             | 29 | Բ2. Ա. Մակաբայցւոց, Ե-<br>ղիազարու և Համունեայ                             | 12 | 29 | † Կիր. Վարագայ Ա. Խաչ                                    |
| 12             | 30 | Գ2. Ա. Երկոտասան մարգարէից                                                 |    |    |                                                          |
| ՀՈՒՆԻՍ (ՅՈ օր) |    |                                                                            |    |    |                                                          |
| 14             | 1  | Ե2. Ա. Սովիայ և Երից դըս-<br>տերաց Պիստոսի, Ելպիսի<br>և Ազապեայ            | 16 | 3  | Ե2. Ա. ԱՀԿԵ. Համազասպայ                                  |
|                |    |                                                                            | 18 | 5  | Եր. Ա. Աշակերտաց Քր.ի                                    |
|                |    |                                                                            | 19 | 6  | † Կիր. Հարսանիք                                          |
|                |    |                                                                            | 21 | 8  | Գ2. Ա. Կուսանաց Թեկղեայ,<br>Վառվառեայ և Պեղեղեայ         |


| Ն. | օ  | Ն.                                                                                 | օ  |    |                                                                                   |
|----|----|------------------------------------------------------------------------------------|----|----|-----------------------------------------------------------------------------------|
| 25 | 12 | Եր . Ա . Թարգմանչաց վարդապետաց մերոց Մեսրոպայ , Եղիշէի , Մովսէսի քերթողի           | 16 | 3  | Դր . Ա . Մինասայ , Երմոգինեայ , Գրաբոսի և կամաւոր աղքատաց Յովհաննու և Ալիքսիանոսի |
| 26 | 13 | † Կիր . Հարսանիք                                                                   | 18 | 5  | Եր . Ա . Հարցն Եգիպտացւոց                                                         |
| 1  | 19 | Եր . Ա . Աւետարանչաց Մատթէոսի , Մարկոսի , Ղուկասու և Յովհաննու , Լատինաց Հոկտեմբեր | 20 | 7  | Եր . Ա . Նիկողայոսի Հյրապտին                                                      |
| 3  | 21 | Բ <sub>2</sub> . Յովսեփայ Աստուածահօք                                              | 21 | 8  | Կիր . Բարեկենդան , Ա . Յակովայ պահոց , հարամիի                                    |
| 6  | 24 | Ե <sub>2</sub> . Ա . Խարիթեանց Արտիմեայ և Քրիստափորի , Կազինիկեայ և Ակիւլինեայ     | 22 | 9  | † Բ <sub>2</sub> . Տօն Յղութեան Ա . Աստուածածնի յԱննայէ                           |
| 8  | 26 | Եր . Ա . Երկոտասան վարդապետաց Ռեթէոսի , ևն . , Տաճկաց Գասրմ                        | 23 | 10 | Դ <sub>2</sub> . Զմեռնամուտ .                                                     |
| 9  | 27 | † Կիր . Գիհի ԽԱՉ , Հարսանիք                                                        | 25 | 12 | Ե <sub>2</sub> . Ա . Եւստաքէոսի , Օգսենտիոսի ևն . Լատ . ԾՆՈՒՆԴ                    |
| 13 | 31 | Ե <sub>2</sub> . Ա . Յովհն . Ոսկեբերանի                                            | 27 | 14 | Եր . Ա . Յակոբայ Մծբնայ Հյրատ .ի , Մարուքէի ճգ ին Մելիտոսի Եպիսկոպոսի             |
|    |    | ԿԱՅԵՄՐԱՅ (30 օր)                                                                   | 28 | 15 | † Կիր . Հարսանիի                                                                  |
| 15 | 2  | Եր . Տօն Ամենայն Սրբոց                                                             | 29 | 16 | Բ <sub>2</sub> . Ա . Իգնատիոսի , Աղդէե , Մարութայի                                |
| 16 | 3  | † Կիր . Հարսանիի                                                                   | 1  | 19 | Ե <sub>2</sub> . Կուսանաց Խնդոսի , և Դոմնայի , Լոտ . կաղանդ և Տարեմուա 1920ի      |
| 22 | 9  | Եր . Ա . Հրեշտակապետաց Գարբիէլի և Միքայէլի                                         | 3  | 21 | Եր . Ա . Արգարու Թագւր .ին                                                        |
| 23 | 10 | † Կիր . Հարսանիի                                                                   | 4  | 22 | † Կիր . Հարսանիի                                                                  |
| 29 | 16 | Եր . Ա . Առաքելոց Անտրէի և Փիլիպպոսի                                               | 5  | 23 | Բ <sub>2</sub> . Ա . Դաւթի մարգարէի և Յակովբայ առ աքելոյն                         |
| 30 | 17 | † Կիր . Բարեկենդան Յիսուսի                                                         | 6  | 24 | Դ <sub>2</sub> . Ա . Մտեփանոսի նախավային                                          |
| 1  | 18 | Բ <sub>2</sub> . Լատինացւոց Դեկտեմբեր                                              | 7  | 25 | Դ <sub>2</sub> . Յունաց ԾՆՈՒՆԴ                                                    |
| 4  | 21 | Ե <sub>2</sub> . Ա . Աստուածածնի Երից ամաց ի տաճարն                                | 8  | 26 | Ե <sub>2</sub> . Ա . Առաքելոց Պոլոսի և Պետրոսի                                    |
| 6  | 23 | Եր . Ա . Գր . ի սքանչելագործի                                                      | 10 | 28 | Եր . Ա . Որդւոց Որոտման Յակոբայ առ աքելոյն եւ Յովհաննու աւետարանիչին              |
| 7  | 24 | † Կիր . Հարսանիի                                                                   |    |    |                                                                                   |
| 8  | 25 | Բ <sub>2</sub> . Ա . Կուսանաց Յուլիանեայ և Վասիլուհւոյ                             |    |    |                                                                                   |
| 11 | 28 | Ե <sub>2</sub> . Ա . Կղեմայ Հայրապետին                                             |    |    |                                                                                   |
| 13 | 30 | † Ա . Թաղէոսիև Բարթողիմէոսի                                                        | 11 | 92 | † Կիր . Բարեկենդան Ա . ԾՆՈՒՆԴ                                                     |
|    |    | ԳԵԿՑԵՄՐԱՅ (31 օր)                                                                  |    |    |                                                                                   |
| 14 | 1  | † Կիր . Հարսանիի                                                                   |    |    |                                                                                   |

—————♦—————

**ՕԳՏԱԿԱՐ ԳԻՐՔ ՄԸ .**— ԳԱՄԵՐ փոքրիկ ճամբորոյը Արեւելի մեջ , հեղինակութիւն ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՌԵԱՆԻ . Ամէն մարդու ընթերցման արժանի հատոր մը , մասնաւորապէս յանձնարարելի է բոլոր դպրոցներու :



# Ի՞ՆՉ Է ԳՐԱՏՈՒՆ ՄՀ



Դրատուն մը գրասերին եւ դպրոցականին համար մատուի մը նուիրականութիւնը ունի: Ան կը մատակարարէ միտքի լոյս եւ հոգիի սնունդ: Գրատունը ազգի մը յուսաւորութեան լաւագոյն միջոցներէն մէկն է: Արդի ժամանակի պահնջներուն համեմատ կազմուած այսպիսի հաստատութիւն մը կը կատարէ կարեւոր դեր մը բնդիանութիւն զարգացումի տեսակետով: Ֆռանսա փառքով պիտի յիշաւտակէ միւս այն՝ ակադեմական հոյակապ միտքերը, որոնք կը կոչուին Առման Գոլէն, Հատէր, Ֆելիքս Ալգան եւ նմաններ: Անոնց հրատարակութիւնները ի՞նչ կարօսով փնտոեցինք պատետազմի սեւ օրերուն մէջ եւ ամենէն վեհ մէկ պրակին ամենէն անհաւատալի զինք տուինք:

**Ս. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ** լու բարենաւծ բլլարով այսպիսի հանրօգուտ ձեռնարկի մը կարեւորութիւնը, պատիւնի յայտարարել մեր սիրելի Ազգին քէ ձեռնիաս և զոհացում տալ ամեն գրենական խնդրանքներուն, ուստի զերմապէս կը հրաւիրէ դիմել իր հասցեին, որ է

## Ա. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

**Կ. Պոլիս, Զամայնըլյար, աղբիւրին մօս, թիւ 50**

**ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ.—Գրատունս կիդրոնաւեղի է Գ. Գալաֆեանի, Յ. Թ. Հինդլեանի, Գ. Ա. Մալարեանի, Միհրան Յովհաննեսանի նման շատ սիրուած եւ սրդիւնածաւ հեղինակներու, նոյնպէս ՓԱՐՈՍ Հրատարակչական ընկերութենէն լոյս տեսած Գեորգ-Մեսրոպի Ազգ. Պատմութիւններու դասրացքին եւ նոյն հեղինակին Հայ Նկեղեցւոյ Պատմութեան հասուններուն, որոնք կարն ժամանակի մը մէջ այնչափ մեծ ընդունելութիւն գտան մեջ:**

